# ՀԱՎԵԼՎԱԾ

## ՀԱԿՈԲ ԿԱՐՆԵՑԻ

## «ՏԵՂԱԳԻՐ ՎԵՐԻՆ ՀԱՅՈՑ»[1]

*Հակոբ Կարնեցին XVII դարի մատենագիր է։ Նրա գրչին են պատկանում Ժամանակագրությունը, հոր՝ Գեորգի կենսագրությունը[2], առաջարկվող «Շինուած Կարնոյ քաղաքի» աշխատությունը և Կարինի վանքերից մեկի 1653 թվի կողոպուտի պատմությունը[3]։*

*Հեղինակի մասին կենսագրական առանձին տվյալներ գտնում ենք վերևում նշված նրա աշխատություններում։ Այդ տեղեկությունները հարստացնելու, մեզ անծանոթ, նոր փաստեր հայտնաբերելու նպատակով ստուգեցինք Մատենադարանում պահվող, 1630—1680 թվերին Կարինում ընդօրինակված երեք տասնյակից ավել ձեռագրերի հիշատակարանները, բայց մեր այդ որոնումներն իզուր անցան։*

*Մեզ հասած կենսագրական տվյալների համաձայն Հակոբը ծնվել է Կարինում, 1618 թ. փետրվարին[4]։ Նա հանդիսացել է Գեորգ և Մանանա ծնողների կրտսեր որդին։ Նրա հայրը Կարինի ավագերեցն էր։ Հակոբն ունեցել է երկու եղբայր՝ Մելքոն և Մաղաքիա անուններով, որոնցից առաջինը «Եղե... յոյժ վաճառական և անուանի քէրվանպաշի և խոճայ»[5], իսկ երկրորդը «Մաղաքիան ընդ նմա»[6]։ Նշանակում է սրանք եղել են վաճառականությամբ զբաղվող, առևտրական կապիտալի ներկայացուցիչներ։ Ինքը, հեղինակն իրեն նվիրել է եկեղեցական և մատենագրական գործունեության։ Հակոբի ուսման տևողության և նրա ուսուցիչների մասին մեզ ոչինչ հայտնի չէ։ Այս աշխատության մեջ, խոսելով Սսի Մինաս (նույն ինքը Թացախ) կաթողիկոսի մասին, նա գրում է, որ նրան Կարինում «տեսաք աչօք մերովք և լուաք զդաս և զքարոզութիւն նորա»[7]։ Իսկ հոր կենսագրականի մեջ նա իր մասին գրում է, որ ստացել է ժամանակի աստվածաբանական բարձր կրթություն[8] և քաջ ծանոթ է եղել հայկական մատենագրությանը։ Հակոբը 1641 թվին, Էջմիածնում, Փիլիպոս Աղբակեցու կողմից ձեռնադրվում է քահանա[9] և վերադառնալով Կարին «եղեն (հեղի-*

---

[1] Կ. Կոստանյանցի հրատարակությունից արդեն հայտնի դարձած այս վերնագիրը նպատակահարմար գտանք այստեղ բերել նույնությամբ։

[2] Այս երկու աշխատությունը հրատարակվեց 1951 թ., տե՛ս ՄԺ, 1, էջ 237—251։

[3] Վերջին երկու աշխատությունը հրատարակեց բանասեր Կ. Կոստանյանցը «Տեղագիր Վերին Հայոց» խորագրով, Վաղարշապատ, 1903։

[4] ՄԺ, 1, էջ 240։

[5] Նույն տեղում, էջ 248։

[6] Նույն տեղում, էջ 248։

[7] Տե՛ս ներքևում, էջ 551։

[8] ՄԺ, 1, էջ 248։

[9] Նույն տեղում, էջ 242, 248։

նակը և ոմն Սուքիասը) ժամասացք ի դէմ հօրն իւրեանց Գէորգայ»[1]։ Այնուհետև Հակոբի կյանքից մեզ ոչինչ հայտնի չէ։ Միայն միջանկյալ մի վկայությունից իմանում ենք, որ տակավին 1662 թվին, նա եղել է Կարինի վանքերից մեկում քահանա[2]։ Թե որքան է տևել Հակոբի կյանքը, նույնպես չգիտենք, թեև հայտնի է, որ նա իր ժամանակագրության մեջ խոսում է 1672 թ. մի դեպքի մասին[3]։

Այս աշխատությունը, ինչպես և Կարինի եկեղեցիներից մեկի կողոպուտի պատմությունը որ առաջին անգամ հրատարակել է Կոստանյանցը, հեղինակը գրել է եղբոր՝ Մաղաքիայի և ուրիշների խնդրանոք[4]։ Կ. Կոստանյանցն իր ձեռքի տակ եղած ընագրի մասին, ծանոթագրություններից մեկում, հետևյալն է գրում. «Մեր սեփական մատենադարանի կորստյան մատնված ձեռագիրներից մեկն էր «Վարք ս. Յովհաննու Ոսկեբերանի». նորա վերջում այլ գրչով կցված էր սույն նկարագիրը, որ բառացի արտագրել ենք՝ բացառությամբ մի քանի երեսների, որոնք իբրև շատ ծանոթ նյութի կրկնություն՝ այն ժամանակ բաց թողինք։ Վերնագիրը «Բանս է զՎերին Հայոց ի Յակոբ երիցուէ» կցված էր անմիջապես վերջին հիշատակարանին, որը գրել էր 1438 թվին Օգսենտ աբեղան. գրչությունների տարբերությունը ցույց է տալիս, որ այլ ոմն է գրել այդ շարահարությունը, որը նյութով էլ տարբեր է»[5]։

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Ձեռագրատանը (Մատենադարան) պահվում են այս աշխատության չորս տարբեր ընդօրինակություններ հետևյալ ձեռագրերում՝ №№ 4542 (А, էջ 1ա—38բ), 8184 (Б, էջ 13ա—48բ), 2995 (В, էջ 112բ—128ա), 6483 (Г, էջ 255ա—278ա), որոնք ժամանակագրական տեսակետից ունեն այսպիսի հնություն՝ А-ն ընդօրինակվել է 1826 թվին, 1756 թվի մի ընդօրինակությունից[6], Б-ն՝ XVII դարի վերջին կամ XVIII դարում, В-ն՝ 1752 թվին[7], իսկ Г-ն՝ 1757 թվին[8]։

Վերևում նշված ևս Կ. Կոստանյանցի հրատարակած (D) տարբերակների մանրազնին համեմատությունը ցույց տվեց, որ Б և В տարբերակները պատկանում են մի խմբի, իսկ Г և D-ն մի այլ, որ նրանց բոլորի նկատ-

---

[1] ՄԺ, 1, էջ 248։

[2] Տե՛ս նըրքևում, էջ 568։ Մատենադարանի № 6972 ձեռագրի 1666 թ. հիշատակարանում Սամուել դպիրը գրում է. «Գրեցաւ... ի քաղաքն Կարնո...և առաջնորդ սուրբ ուխտիս Սարգիս վարդապետ և տեղապահ սորին քաջ և իմաստասէրք Յակոբ բարունապետն և Պետրոս վարդապետք...» էջ 237բ։

Կարծում ենք խոսքն այստեղ վերաբերում է Հակոբ Կարնեցուն։ Եթե ճիշտ է այս, նշանակում է վերջինս 1666 թվին եղել է Մուտուրկու վանքի առաջնորդի տեղապահ։

[3] ՄԺ, 1, էջ 243։

[4] Մատենադարանի № 6485 ձեռագրի հիշատակարանից, որը Հակոբ Կարնեցու ինքնագիրն է, պարզվում է, որ նա երիտասարդ հասակում զբաղվել է նաև ձեռագրեր ընդօրինակելով, որի մասին գրում է. «...զտառապեալ ծրողս գանպիտան Յակոբս, որ եմ մեղաւք ի լի և եմ Արզրումցի թվին ՌՁԸ (1639) գրեցի ի դուռն սուրբ Աստուածածնի, որք հանդիպիք այսմ գրգի իմաստութեան ժողովողի կարդալով կամ աւրինակի յիշման առէք զիս ի կարգի, լի և առատ տուք զողորմի ընդ նմին և զհայրն իմ՝ զտէր Գէորգն, զի յոյժ առաւել սէր ունէր այս գրոցս խնդրեաց և ես գրեցի և դուք յիշոխք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ. ամէն» (154բ)։

[5] Հակոբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903, էջ 62, ծանոթ 1։

[6] № 4542, էջ 35ա։

[7] № 2995, էջ 130ա։

[8] № 6483, էջ 275ա։

րամբ էլ A տարբերակն ունի բավական զգալի շեղումներ։ Այս բանն ավելի վաղ նկատել էր բանասեր Դալուստ Տեր-Մկրտչյանը, որը № 4542 (A տարբերակի) ձեռագրի առաջին էջին կից փակցված թերթիկում գրել է. «Կազմել տալ և լավ պահել, ունի կարևոր ընթերցվածներ»։

Տարբերակների ուշադիր համեմատությունը ցույց տվեց մի շարք հետաքրքիր փաստեր, նախ A-ի նկատմամբ մնացած տարբերակներն ունեն խմբագրման հետքեր, օրինակ՝

| A տարբերակ | Հրատարակություն |
|---|---|
| 1. էջ 550 «Ունի բազում գիւղս, ծաղկաւէտ և խոտալիր, մինչև հասանէ ի Թորգունեաց ձորն և երկիրն Հանդերձու է գիւղք բազումք և բնակութիւն է Հայոց և Քրդաց, եայլան լի խոտով»։ | 1. էջ 9—10 «Եւ ունի գիւղս բազումս ծաղկաւէտ և խոտալիր, մինչև հասանէ ի Թորձունեաց ձորն և երկիր. և բնակութիւն է Հայոց և Քրդաց յեայլանին»։ |
| 2. էջ 553 «Եւ ունի բերթ մի պարսպաւոր և անառիկ ի վերայ բարձրաբերձ վիմի հաստատեալ, որ այժմ Բաբերթ ասեն քաղաքին այն»։ | 2. էջ 15 «Եւ ունի բերդ մի պարսպաւոր անառիկ ի վերայ բարձրաբերձ վիմի հաստատեալ, որ այժմ Բաբերդ ասեն։ |
| 3. էջ 570 «Աստուծով ամենայն բարութեամբ լի, ծառոց պտուղքն զանազան և անթիւ, խնձոր և տանձ, ծիրան և դեղձ, նուռ և սերկևիլ, դամոն և խաղող շատ է ի շուկաներն լի մինչև ի Հայոց Զատիկն. և ս ձիթապտուղ, շապալութ, ընկուզ և կաղին, արմաւ և նուշ, մեղրապով և սեղ, փշատ և դզլնուտ և չամիչ անթիւ ի լրանալ ամին ի սպառ ոչ պակասի»։ | 3. էջ 39. «Ամենայն կողմանէ բարութեամբ ի լի է. ծառոց պտուղն՝ խնձոր և տանձ և խաղող շուկաներն ի լի մինչև ի Հայոց Զատիկն. ձիթապտուղ, շապալութ, կաղին և չամիչ անթիւ, արմաւ և նուշ ի բոլոր տարին»։ |

Երկրորդ՝ A տարբերակում կան առանձին հատվածներ, որոնք չենք գտնում մնացած տարբերակներում. օրինակ, նախքան Կարինի վանքերի մասին գրելը հեղինակը համառոտակի թվարկում է վանքերը և ուխտատեղիները, ապա նոր պատմում նրանց մասին, այս օրինակը եզակի չէ։

Երրորդ՝ հրատարակության տարբերակն ունի մի շարք անունների անճշտություններ. օրինակ, ոչ թե Ուլեթ, այլ Կուլեթ, ոչ թե Ողկ, այլ Օշկ (Օշկ=Էօշք) և այլն։

Վերևում բերված, ինչպես էլ մնացած փաստերը, որոնք չենք նշում, հավաստում են մեր ասածը։ Ի դեպ, անհրաժեշտ է նշել, որ A տարբերակը ևս զերծ չէ առանձին բառերի բացահայտ անճշտություններից, որոնք հրատարակության բնագրում ուղղեցինք՝ մյուս տարբերակների օգնությամբ։

Տարբերակներից և ոչ մեկը չունի այն վերնագիրը, որը բերված է Կ. Կոստանյանցի հրատարակության մեջ։ Ըստ երևույթին, հրատարակության բնագրի խորագիրն ավելացվել է հետագայում, ուրիշի կողմից, հավանաբար ձեռագրի սկզբից թերթ կորչելու պատճառով, որովհետև այստեղ բացակայում է Կարինի հիմնադրման հանգամանքները, որոնք քաղված են Մ. Խորենացուց և հանդիսանում է այս աշխատության ներածականը։ Աշխատության խորագիրը, որը գրել է Հակոբ Կարնեցին, այս է. «Շինուած Կարնոյ քաղաքի, որ կոչեցաւ Թէոդուպօլիս, որ այժմ Արզրում վերաձայնիւ կոչի»։

Այս աշխատության նյութը միայն Б և B տարբերակներում է շարադրված մի շարք կոնկրետ ենթավերնագրերի տակ, որոնք գտնվում են ձե-

*սաղերի ներքևի լուսանցքներում. օրինակ՝ «Վասն Կարնոյ քաղաքին», «Վասն Կարնոյ քաղաքին և գաւառաց նորին», «Վասն շրջակա Թէոդուպօլսին», «Վասն շրջակա գաւառացն և բերթօրէից Թէոդուպօլսի», «Վասն Թէոդուպօլոի սրբատաշ բերթին» և այլն։ Այս ենթավերնագրերն անցնում են մեկ տասնյակից։*

*«Շինուած Կարնոյ քաղաքի» աշխատությունը թեև զուտ պատմական նյութեր պարունակող երկերի թվին չի պատկանում, սակայն բովանդակում է մի շարք այնպիսի տվյալներ, որոնք վերաբերում են ոչ միայն Կարինին և նրա շրջակայքին, այլև Օսմանյան Թուրքիայի վարած ավերիչ ասպատակություններին և պատերազմներին։ Աշխատության բուն նյութը պատմական Հայաստանի «աշխարհներից» մեկի՝ Բարձր Հայքի աշխարհագրական, տնտեսական բնութագրման, ժողովրդի զբաղմունքի մասին է և ազգագրական հետաքրքիր նյութեր է պարունակում։ Հեղինակն առանձին առանձին, հերթականությամբ, խոսում է Կարինի կուսակալության մեջ մտնող 23 գավառների մասին։ Այնուհետև, նա չի մոռանում խոսել վանքերի, եկեղեցիների մասին, պատմելով սրանց ոչ միայն XVII դարի վիճակը, այլև հիմնադրման ավանդական պատմությունները, ինչպես նաև Բարձր Հայքից սկիզբ առնող գետերի և սրանց ընթացքի մասին։*

*Հետաքրքիր են այն նյութերը, որոնք վերաբերում են ոչ միայն Օսմանյան Թուրքիայի վարած բռնակալական քաղաքականությանը հայերի, վրացիների նկատմամբ, այլև կայսրության ծանր լծի տակ կեղեքվող, աշխատավոր ժողովուրդների՝ հայերի, վրացիների, թուրքերի հաշտ ու խաղաղ, դրացիական փոխհարաբերությանը և կյանքին։ Վերջին տվյալները, մի ավելորդ անգամ հաստատում են այն ճշմարտությունը, որ տարբեր ժողովուրդների՝ աշխատավորության անդորր խանգարելը, նրանց իրար դեմ գրգռելը կատարվում էր իշխողների նեղ դասակարգային շահերից ելնելով։*

*Հեղինակն աշխատության հիմնական մասը նվիրել է իր տեսածի և գիտեցածի նկարագրությանը, թեև չի խորշել պատմական և առանձին այլ հարցերի կապակցությամբ իր նախորդ մատենագիրներին կամ ուրիշ հեղինակություններին դիմելուն։ Իր օգտագործած աղբյուրների մի մասը նա հանվանե հիշում է, օրինակ՝ Արիստոտելին, Մ. Խորենացուն, Ն. Շնորհալուն, Կ. Գանձակեցուն, Հ. Թլկուրանցուն, Աստվածաշունչը և այլն, մյուս դեպքերում նա չի հիշում նրանց անունը. օրինակ՝ Ագաթանգեղոս, Փ. Բուզանդ և այլն։*

*Թե երբ է գրել հեղինակն այս աշխատությունը, հայտնի չէ, սակայն աշխատության մեջ բերված փաստերի ուշադիր քննումը հնարավորություն տվեց մեզ պարզել նաև այդ խնդիրը։ Այդ փաստերի քննությունը, որը կատարված է բնագրին առընթեր ծանոթագրություններից մեկում (27), ցույց տվեց այս աշխատությունը գրելու ճշգրիտ ժամանակը՝ 1668 թ.։*

*Աշխատությունը Հակոբ Կարնեցին գրել է ջերմ շնչով, պարզ և անմիջական, առանց ճոռոմաբանությունների, այն կարդացվում է մեծ հետաքրքրությամբ, լեզուն ժամանակի գրաբարն է, զերծ բարբառային խառնուրդից։*

*Ինչպես ասվեց, Հակոբ Կարնեցին քահանա էր և Կարինի ավագերեց Գևորգի որդին, իսկ եղբայրները եղել են խոշոր վաճառականներ։ Այստեղից էլ պարզ է դառնում հեղինակի սոցիալական վիճակը և նրա հետաքրքրու-*

թյան բնագավառը։ Լինելով բարձր խավերին մոտիկ մի անձնավորություն, հեղինակը հրճվանքով է պատմում մասնավորապես վաճառականների հարստության և նրանց առևտրական աշխույժ գործունեության մասին։ Կարինի հայ վաճառականների մասին նա գրում է. «Եւ ի վաճառականացն ի Դ (4) կողմանց ազգէս Հայոց անթիւ կան նստեալ տարին բոլոր ըովանդակ ի դնել և ի ծախել՝ ի փառչայ և ապրշում, ցեղ ու ցեղ ղումաշ և զանազան չուխայ, կտաւէղէն և քթան, անթիւ և բազում ջաւահիր քար, ալմաս և եաղութն, լալ և զմրութն, սամուր և վարշաղ և ամենայն մազեղէն ի բոլոր տարին յայտնի դնեն և վաճառեն...»[1]։

Բարձր Հայքի տարբեր գավառների բնական հարստությունների և տնտեսական վիճակի մասին խոսելիս, հեղինակը գրում է, որ գյուղերն առատ են անասուններով, կաթնամթերքներով, իսկ դաշտերը՝ հացահատիկներով, մրգաշատ այգիներով և այլ բարիքներով, սակայն նրա տեսադաշտից վրիպել է հայ աշխատավոր գյուղացու վիճակը, այն դասակարգի, որի «վրա էր ծանրանում հասարակության շերտերի ամբողջ կառուցվածքը՝ իշխանները, պաշտոնյաները, ազնվականությունը, քահանաները, պատրիկները և քաղաքացիները։ ...ամենուրեք նրա հետ վարվում էին իբրև մի առարկայի հետ, իբրև մի բեռնատար կենդանու հետ և նույնիսկ ավելի վատթար ձևով»[2]։

Ահա թե ինչու, ակամա հեգնանք է առաջացնում հեղինակի «ամենայն արանց աթլաս և ծիրանի» ու նման սույթները։ Ճիշտ է, որ Բարձր Հայքի գավառների հողը բերրի էր և աշխատավոր գյուղացին աճեցնում էր առատ բերք, թեև հեղինակի համար փույթ չէ, թե դրանք վերջին հաշվով ով էր վայելում։ Ուրիշ հեղինակների օրինակով[3] Հակոբ Կարնեցին ևս անդրադառնում է Օսմանյան Թուրքիայի կենտրոնական և տեղական իշխանությունների հարկային ծանր քաղաքականությանը, որն ստիպեց վրացիների մի մասին դավանափոխ լինել։ Ահա թե ինչպես է բնութագրում նա թուրքական բարբարոս ռեժիմը. «Զի ցեղ ու ցեղ և ազգի-ազգի սուտ պատճառաւս հարկապահանջութիւնն և կեղեքելն անասելի է և անպատմելի և անողորմ տուգան առնուլն ի քրիստոնէից, զի ինձ այսպէս թվի, թէ Դանիէլի գլուխ [է, 19, 23] վասն սոցա մարգարէացաւ, վասն չորրորդ գազանին, թէ ահեզ էր և զարմանալի, ուտէր և զմնացեալսն առ ոտն կոխէր»[4]։

Սակայն, այն դերի մասին, ինչ խաղացել են հայ շահագործող դասերը՝ աղաները, վաճառականները և եկեղեցականներն աշխատավորության շահագործելու խնդրում, նա լռում է։

Հեղինակը, հայրենասիրական զգացմունքով շարադրելով այս աշխատությունը և ցույց տալով իր հայրենիքի գեղեցկությունն ու հարստությունը, հանդում է քաղաքական եզրակացությունների՝ պաշտպան է կանգ-

---

[1] էջ 568։

[2] Ֆ. Էնգելս, Գերմանական գյուղացիական պատերազմը, Երևան, 1934, էջ 42։

[3] Տե՛ս Սիմէոն Լեհացի, Ուղեգրութիւն («Հանդէս Ամսօրեայ», 1934 թ., Գ. Կամախեցի. Ժամանակագրութիւն, Երեմիա Չելեպի, Օրագրութիւն, Երուսաղէմ, 1939, Ա. Գավրիժեցի և ուրիշներ։ Տես նաև Հ. Անասյանի «Թուրքական տիրապետությունը Հայաստանում XVII դարում» ուշագրավ հոդվածը (Հայկական ՍՍՌ ԳԱ-ի Հասարակական գիտությունների բաժանմունքի «Տեղեկագիր», 1951 թ., № 5, էջ 51—69)։

[4] Տես նույն տեղում, էջ 563։

նում, ֆեոդալական կենտրոնաձիգ միապետության գաղափարների։ Խոսելով Օսմանյան Թուրքիայի ռազմա-ֆեոդալական կենտրոնաձիգ կարգերի մասին, որոնք ապահովեցին Թուրքիայի հաջողությունները ուրիշ ժողովուրդներին նվաճելու գործում, ավելացնում է. «Ոչ թէ գովելով պատմեմ զայս, այլ աւաղելով և արտասուելով գրեմ, յիշելով զսոպո և զրիրտ զանկարք և զանվարք զօրացն Հայոց, որ աննհնազանդք եղեն առաքելոց և հայրապետաց եւ թագաւորաց և իշխանաց, զի արտուղի գնացին և անբարտաւան շաղւոք շրջեցան մինչ որ անբարկանելին Աստուած խեթիւ հայեցաւ և ներողութեամբն Աստուծոյ թագաւորեցին սոքայ»[1]։

Հեղինակի այս միտքը պատահական չէ, նա արտահայտել է XVII դարի հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչների իղձերը, որովհետև Կարինը հանդիսանում էր վաճառականների գործունեության խոշոր կենտրոններից մեկը, իսկ հեղինակը սոցիալական այս միջավայրի ծնունդ։

Այս աշխատության Կ. Կոստանյանցի հրատարակությունն ավարտվում է հետևյալ երկարաշունչ խորագիրը կրող գլխով. «Դարձեալ պատմութիւնս այս ի վերայ Կարնոյ քաղաքիս Միարան սուրբ Աստուածածնի եկեղեցոյս է, զորոյ հրաշս և պատմութիւնս և զօրութեան շնորհս ի մարդիկք յարադահաս բազմաց հասեալ է, որոց և մինն ի բազմաց ասասցուք փոքր ի շատէ, զորս տեսաք աչօք մեր»[2]։

Կ. Կոստանյանցն այս պատմությունը համարել է «Տեղագիր Վերին Հայոց» աշխատության անբաժանելի մասը և վերջին գլուխը։ Սակայն, եղած փաստերի ուշադիր զննումը մեզ բերեց այն համոզման, որ այդ գլուխը ոչ մի կապ չունի Հակոբ Կարնեցու «Շինուած Կարնոյ քաղաքի» աշխատության հետ և այն, թեև գրել է Հակոբ Կարնեցին, առանձին և ինքնուրույն մի փոքրիկ պատմություն է[3], որը վերաբերում է 1653 թ. Կարինի Միարան ս. Աստվածածնի եկեղեցու իրերը գողանալու հանգամանքներին, գողերի հայտնաբերմանն ու պատժելուն։

Այդ բանում համոզվելու համար մատնացույց կանենք հետևյալ փաստերը. նախ «Շինուած Կարնոյ քաղաքի» աշխատությունը բացի բուն նյութից ունի ներածական և վերջաբան։ Վերջաբանում հեղինակը գրում է. «Բայց գիտեմ, զի պատմութիւնս պարսաւելի է իմաստնոցն, բայց խնդրեմ ազատ առնել զմեզ ի բամբասանաց և կամ զթերին լնուլ, քանզի յոյժ խնդրեաց հարազատ եղբայրն իմ Մաղաքեայ և քահանայքն և սարկաւագունքն մեր յոյժ թախանձեցին և ես զխնդիրս նոցա կատարեցի…»[4]։

Մեջբերված և ընդգծված հատվածը ցույց է տալիս, որ «Շինուած Կարնոյ քաղաքի» աշխատությունը սրանով ավարտվում է, որովհետև հեղինակն իզուր չէր գրի «ես զխնդիրս նոցա կատարեցի»։

Երկրորդ՝ Միարան ս. Աստվածածնի եկեղեցու թալանի պատմության վերջում հեղինակը գրում է. «Բայց ի մէջ եղբարցն քահանայական դա-

---

1 Տե՛ս ներքևում, էջ 562—563։

2 Տե՛ս էջ 53—54։

3 Մատենադարանի գիտ. աշխատակից Ս. Հալաֆարյանը ևս, որը մասնակցել է պատմական նյութեր պարունակող ձեռագրերի բիբլիոգրաֆիան կազմելու աշխատանքներին, բիբլիոգրաֆիայում այդ աշխատությունը նշել է որպես Հակոբ Կարնեցու առանձին աշխատություն։

4 Տե՛ս ներքևում, էջ 582։

սուցն ես միայն էի դառածեալ մեզօք տէր Գէորգի որդի Յակոբս, որ զայս փոքրիկ պատմութիւնս արարեալ գրեցի ի զգուշութիւն ապագայից եղբարցն մերոց»[1]։

Ինչպես դժվար չէ հետևեցնել, հեղինակը հատուկ նպատակով, որպես առանձին գործ, գրել է այս պատմությունը։

Երրորդ՝ այս մասը վերևում նշված ձեռագրերից ունի միայն BГ տարբերակը։

Վերջապես, այս պատմությունը ոչ մի կերպ չի շաղկապվում առաջարկվող աշխատության բովանդակած նյութի հետ։ Նկատի ունենալով վերևում ասածը, այս փոքրիկ պատմությունը չենք հրատարակում այստեղ[2]։

Այս աշխատության ընդարձակ հատվածը, որը վերաբերում է բյուզանդական կայսր Հերակլի դեպի Պարսկաստան կատարած արշավանքին, խաչափայտի «գերությունից» ազատելու և սրա հետ կապված ավանդական պատմություններին[3], հրատարակությունից դուրս գցեցինք՝ առանձին հյուրևորություն չներկայացնելու պատճառով։ Սակայն մի քանի փոքրիկ հատվածներ, որոնք ունեն տեղագրական նկարագրություն, բերված են բնագրում։

Հակոբ Կարնեցու «Շինուած Կարնոյ քաղաքի» աշխատության սույն հրատարակության համար հիմք ընդունեցինք A տարբերակը, իսկ մյուսների տարընթերցվածները դրեցինք տողատակ։ Հրատարակության բնագիրը չծանրաբեռնելու նպատակով անտեսեցինք ուղղագրական տարբերությունները, օրինակ «բերթ», «ծռվ», «դամբարան», «խէթիւ», «փոանկ», «անառիք», թե «բերդ», «ծօվ», «դանբարան», «խեթիւ», «փոանգ», «անառիկ» և այլն։

A տարբերակն ունի նաև ուղղագրական մի առանձնահատկություն, ուր «ւ» տառը շատ հաճախ գործածված է «վ»-ի փոխարեն, օրինակ «մինչև ի Կուկաս լեառն», «և ի ստորոտու լերինն է երկիր մի մեծ», «և հուիտք բազում ոչխարաց», «Թէ ւրացու զաւակ է», «Վանայ ծուափն», «տարին բոլոր բուանդակ» և այլն։ Ընթերցանությունը հեշտացնելու նպատակով նման օրինակների մեջ կատարել ենք սրբագրություն և գործածել շեղագիր «վ» տառը, այսպես «մինչև ի Կովկաս լեառն», «և ի ստորոտով լերինն է երկիր մի մեծ», «և հովիտք բազում ոչխարաց», «Թէ Վրացու զաւակ է», «Վանայ ծովափն», «տարին բոլոր բովանդակ» և այլն։

---

[1] «Տեղագիր Վերին Հայոց», էջ 60։

[2] Պատրաստում ենք «Մանր պատմություններ» ժողովածուն, ուր տեղ կգտնեն նման փոքրիկ բնագրերը։

[3] Այդ մասին հեղինակը գրում է. «Լիակատար գրեալ կայ ի Կիրակոս պատմագիրն և այլ ուրեք»։ Կ. Գանձակեցու պատմության հրատարակության բնագրում վերոհիշյալ դեպքերի մասին գտնում ենք ընդամենը չորս տող (էջ 51)։ «Արարատ» ամսագրում (1888 թ., էջ 399—404) և «Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ», (Էջմիածին, 1921, էջ 6—16) աշխատության մեջ հանդիպում ենք Հերակլի Պարսկաստան կատարած արշավանքի, Հացունյաց խաչի պատմությանը։ Վերջիններս, առաջարկվող բնագրի համապատասխան հատվածի հետ ունեն մի շարք շոշափելի կետեր, թեև չի կարելի ասել, թե հեղինակը միայն դրանցից է օգտվել։ Եվ որովհետև այս հարցերի լուսաբանումը մեզ համար առաջնահերթ և գիտական նշանակություն չունի, ուստի բավականացանք լոկ հիշատակությամբ։

## ՇԻՆՈՒԱԾ ԿԱՐՆՈՅ ՔԱՂԱՔԻՆ, ՈՐ ԿՈՉԵՑԱՒ ԹԷՈԴՈՒՊՕԼԻՍ, ՈՐ ԱՅԺՄ ԱՐԶՐՈՒՄ ՎԵՐԱՅՁԱՅՆԻԱԼ ԿՈՉԻ 1ա

*Անատօլէ զօրաւարէ ընկալեալ զհրամանն արքունի, ի կայ-
սերէն Թէոդոսէ, եկեալ յաշխարհս մեր հաճի ի գաւառին Կարնոյ,
իբրև ի միջոցի շինեալ զքաղաքն արգաւանդահող շատ, ջուր
շատ և բերին վարկուցեալ զվայրս, ոչ կարի բացեայ ի տեղացն,
որ Եփրատա մասն ինչ բղխէին աղբիւրք և հանդարտ գնացիւք
յուռուցեալք ծօվանան մօրաբեր երևութիւք. յորում անբաւու-
թիւնք ձկանց և զանազան հաւուց ճարակաւորաց, որոց ի ձվոց
և ի ձկանց միայն կերակրեալ լինէին բնակիչքն: Եւ զեզեր մօ-
րաին շամպ յոյժ և բազմութիւնն եղեգանց. և դաշ[տ]քն ունին
զթանձրութիւն խոտոց և շրջաբերութիւն սերմանաւոր խոտոց և
լերի[ն]քն լի են երէօք կճղաբաշխօք և որոճանօք, նաև անա || -* 1բ
*սունք պաճարս բազումս ցուցանեն՝ մեծահասակք, քաջամար-
մինք և յորս յուցանեն մեծահասակ գերութեան: Եւ առ ստորո-
տով մի գեղեցկանիստ գտեալ լերինն բազում աղբիւրք ականա-
կիտս և մանունս բղխեալ՝ ան[դ] տեղադրեաց զքաղաքն, զորով
շրջափակեալ խոր փոսիւ անդնդալիր հաստատեաց զհիմունս
պարսպին անտաշ վիմօք խորագոյնս, կրօվ զերեսս անդնդոց
փակեաց և ի վերա բարձրաբերձ աշտարակս ահագինս շինեաց,
յորոց զառաջինն Թէոդոս անուանեաց ի պատիւ Թէոդոսի. և ի
նմանէ փոքրիկ ամրոցս ի բարձրաւանդակ տէղին և անդր շի-
նեաց աշտարակս ժառանգա[ւ]որս և հասոյց ընդ մեծ պարսպին
և իբրև զնաւացուկս, և առանց գոգաւոր խորշիւք, որք ընդդէմ
հային լերինն: Սմապէս և ընդդէմ դաշտին հիւսիսոյ: Իսկ ընդդէմ
յարևելից և արևմտից կանկնեաց աշտարակս բոլորաձև և այլ
հնարս հնարեաց, զի թէ || գայցեն թշնամիք և նեղեսց[ե]ն զքա-* 2ա

---

1 Г *Շինուածք*, БГ *Թէոդուպօլիս*, В *Թէոդոյպօլիս*: *1—27 տողը* D չիք: 2 В *Արզրու-րում*, БВ *վերայձայնիալ* չիք, Г *վերաձայնեալ յորջորջի*: 3 Б *զօրավարի*, Г *զօրավարէ*, *հրամանն*: 4 В *աշխարհս*, Б *մեր և շրջեալ ընդ բազում կողմանս մեր հաճի*: 5 Б (*արգա-ւանդահող*) *շատ* չիք, *շատաջուր*: 6 Б *բերրի* փխ. *բերին*, Г *բերեն*, Б *ի բացեա ի տեղեացն*, В *բացեա*, Г *ի բացեայ*: 7 БВ *Երրատայ*, Г *Եփրաայ*: 8 Б *յառաջացեալ* փխ. *յուռու-ցեալք*, ВГ *յուռուցեալ*: 9 БВ *յորոց*: *10—11* ВГ *մօրային*: 11 БВ *բազմութիւն*, Г *բազմու-թիւնք*, *եղէգանց*: 12 Б *զքաջաբերութիւն* փխ. *շրջաբերութիւն*, Б *պաղոց* փխ. *խոտոց*: 13 Б *վայրի երէովք*: *13—14* Б *զանասունք*: 15 БВ *գիրութեան*: *15—16* БВГ *ստորոտով*: 16 БВГ *լերինն գտեալ*, Г *աղբիւրս*: *16—17* Г *յականակիտս*: 18 В *զհիմունսն*: 19 БВГ *խորագոյնս*, В *անդնոց*: 22 Г *ամրոցս շինեաց*, БВГ *տեղին*: 23 В *մեծի*: 26 Г *արևելից*, БВ *յարևմտից*, БВГ *բոլորաձևս*: 27 БВ *դուցէ* փխ. *զի թէ*:

ղաքն և մուտ և ել ոչ տան առնել. արարին ներքնափոր ի միջոյ քաղաքէն փորել ի ներքոյ գետնոյն յխորագոյն շինել քարամբ և գնացեալ էհաս ի մէջ գաշտին, ճաշո մի գնացք ի տեղին որ ժողով ջրոցն է և շամպ յոյժ, կարող են բերել անասնոց խոտ և այրելոյ եղէգ։ Եւ ի միւս [կ]ողմն քաղաքին հարաւոյ ի կողմանն նոյնպէս գետնափոր փակած մեծամեծ վիմօք մինչև ի լիառն, որ կոչի Այծու պտկունք և [թէ] կարիք հասանիցին կարող են ձիօք և հեծելօք մտանել ի քաղաքն առանց գիտելոյ թշնամիացն։

Եւ վասն ջրոցն կարի դեղեցիկ է և վաեյուշ է, զի ոչ ոք է ի քաղաքին առանց ջրոյ, ոչ մեծատուն և ոչ աղքատ, ամենեքեան ունին ջուրս անուշս, բերեալ երեսօք անգնգոց։ Եւ այլ ջուրս ընդ յոլով տեղիս ածեալ մտոյց անյայտ գնացիւք։ Եւ ի վերա ջերմն բղխեալ աղբերացն յարկս վիմափոր քարանց շինեալ և ի մէջ քաղաք[ի]ն ապարանք և աշտարակք գեղ‖[2բ]եցկաշէնք և սրբագործս, փողոցք և հրապարակք, սպանդանոցք և վաճառանոցք սրբատեսիլս, եկեղեցիք բազումք գմբեթայարկք և հրաշալիք տեսօղացն։ Եւ դրունք քաղաքին բարձրասեմ և լայնանիստ և կատարեալ պարսպաւ վայելուչս և բուրքն ամենայն խոսրովայինք։ Եւ ի մէջ քաղաքին ի բարձրաւանդակի վայր մթերանոցս բազմապատիկս շինեաց, Օգոստոսի անուանեաց՝ ի պատիւ Օգոստ[ոս]ի։ Եւ ելից զինու և պահապան գնտիւք զքաղաքն և անուանեաց Թէոդուպօլիս, զի յիշատակաւ քաղաքին անմահ լիցի անունն[1]։

Արդ և ես նուաստ ոգի յետնեալս ի կարգէ քահանայից Յակոբ անուամբ, որ եմ ի բնիկ գեղեցկաշէն մայրաքաղաքէն Թէոդուպօլսէս, որ այժմ գեր ի վերոյ և վարկիանէ ժամանակս և լի է ամենայն բարութեամբ։ Կրկնաբանեցից զվայելչութիւն սորա, զի սա է Վերին Հայք[2] և է արեելք, և է շինեալ վասն ամրութեան Հոռոմոց և Պարսից հրամանաւ մեծ կայսերնՍտանպօլայ Փոքուն Թէոդոսի, որ էր ազգաւ Ֆռանկ, վերակացութեամբ սրբոց վարդապետացն մերոց փիլ[ի]սոփայիցն Դաւթի և Մովսեսի աշակերտացն Սահակայ ‖ [3ա] և Մեսրոպայ։ Սկիզբն արասցուք թելադրութեամբ հոգոյն սրբոյ քաղաքիս, որ բարձ[ր] է քան զամենայն երկիր[3] և ունի պատուական գաւառք և աւանք, բերդորեայք ի Դ (4) կողմունսն, և իշխօղ է իշխան սորա բազում տեղեաց. զոր պատմեցից կարգաւ։

Նախ ի հարաւոյ կողմն են գաւառք գովելիք ի ձորն Լակզի

---

1 Г արար։ 1—22 տողը D չիք։ 2 БВ շինեալ։ 3 БВ եհաս, ВВГ ճաշոյ, տեղին, ВГ ուր փխ. որ։ 4 ВВ ջրոց։ 5 БВГ այրելու, БВ միւս, Г և միւս, БВГ ի կողմանէն հարաւոյ։ 7 БВ հասանիցեն։ 8 БВГ թշնամեաց։ 9 Г ջրոց, А ջորոցն, БВГ (վաեյուշ) է չիք։ 11 В անուշ, Г անոյշս, БВ զերեսօք, АВВ ըստ փխ. ընդ։ 13 Г յաղբերացն, վիմափորս, БВ շինեաց։ 14 Г գեղեցիկք։ 14—15 Г սրբագործք։ 16 Б բազում։ 19—20 БВ բազմապատիս։ 23—25 տողը՝ Արդ և ես....... Թէոդուպօլսէս А չիք։ 23 БВ և չիք, D արդ և չիք։ 24 D Յակովբ, Б մայրաքաղաքէս։ 25 D Թէոդուպօլսէն, А յաժմ, D այժմու, БГ վարկեանէ, В վայրկեանէ, D վարկեան, (ժամանակս) և չիք։ 26 D է լի։ 28—29 БВ Ըստամպօլա, Г Ստամպօլա, D Սաամբօլայ։ 29 БВ Թէոդոսէ։ 30—31 БВ Մովսիսի, ГD Մովսէսի։ 31 В Սահակա, Մեսրօպա, D Մեսրովպայ։ 32 D հոգւոյն։ 33—34 ВD բերդորայք։ 35 АБВ զոր չիք։

կոչեցեալ, ունի բազում դուզս, ծաղկաւէտ և խոտալիր, մինչև հասանէ ի Խորզունեաց ձորն, և երկիրն Հանգերձու, է գիւղք բազումք և բնակութիւն է Հայոց և Քրդաց, ևայլոն լի խոտով։ Եւ ունի Բ (2) աղտհանք ջրոյ, որք բազում տեղիս նոքա լնուն աղով[4], եղօվ, բնկուզով և մեղրով։ Եւ անտի երկիրն Խորձունեաց, բազում գիւղք և դաւառք, այգեստանօք և մրգաւէտ ծառօք զարդարեալ է, և ունի գիւղաքաղաք զԿեղի փոքր դղեակ մի, և է այժմ պարոնանիստ և կարի ախորժահայք վարդապետաց որրոց երաժըշտականաց և բնակարան, դամբարան. և կայ վանք Բ (~), այժմ միաբանակեցաց տէղիք, մինն անուն սուրբ ‖ Կարապետին [3r] և միւսն՝ որրոյ կուսին Մարիամու Աստուածածնին. և է անդ գերեզման սրրոյն Խաթայ եպիսկոպոսին, որ պահպանութիւն է յաշխարհին, որ այժմ Հակոտուն կոչևն։ Եւ ելանէ երկաթ և գուլուլայ թօրի. և ունի սինօո մինչև Բալու։

Եւ անտի է գաւառ մի գեղեցկաշէն յոյժ, պարոնանիստ, խոտալէր և ջրաւէտ, անասնօք և ոչխարօք լի և գեղերօք Հայոց, որ այժմ Ղըզըլջան կոչեն։

Եւ ի արևմտից կողմ ·են գաւառք զարմանալիք, Առաջինն Հայք, որ այժմ Դերջան ասեն և ունի գիւղս բազումս Հայոց բընակարան, և է երկիր դաշտաձև, հացալից, անասնօք, իւղօք և մեղրօք ի լի. և ունի գուղաքաղաք զԲագառիճ առ աւին Եփրատա, և ունի վանս Բ (2), որ այժմ տեղի է միաբանակեցաց, մինն է անքոյթ ի բարձրաւանդակ տեղոջ, որոյ անունն Պըղընձագոյն անապատ ասեն, և միւսն է հիմնարկեալ ի սրրոյն Գրիգորէ Լուսաւորչէ, եդեալ մասն ի սրբոյ Կարապետին և միւս՝ բարձրագոյն եկէղեցին սուրբ ‖ Դաւիթ անուանեալ բարձրակառոյց խաչերով. [3ա] և է գանձարան որրոց վարդապետաց ի պահպանութիւն երկրին այն. և է անդ գերեզման սրրոյն Աթենաթորոսին. որ յաւուրս Համբարձմանն ուխտ լինի և բազում ախտաժէտաց փարատումն լինի շնորհօքն Քրիստոսի և սուրբ վկային Նորա։

Եւ գընացեալ հասանէ երկիրն Ցեկեղեաց դաշտաձև և լայնանիստ և ունի գիւղք և աւանք բազում և ունի վանս ԻԴ (24), գմբէթայարկք և հրաշալիք տեսողացն։ Եւ է անդ դամբարան

---

1 ГD և ունի, БВГD գիւղս բազում (ГD բազումս)։ 2 D Խորձունեաց, Б յերկիրն, ГD երկիր, D Հանդերձու է գիւղք բազումք չիք։ 2—3 БВ բազում։ 3 ևայլանի, ВГD յեւայլանի, ВВГD լի խոտով չիք։ 4 D երկու, ВВГD որ։ 5 БВ յերկիրն։ 7 D մի չիք։ 9 В կա վանս, Б վանս, D երկու։ 10 В տեղի, БВ մէկն (В մեկն) յանուն սրբոյ Կարապետին է։ 11 ВВ միւսն, Г միւսն սուրբ, ВВ Մարիամու է, Աստուածածնին չիք, D և միւսն...... Աստուածածնին չիք։ 12 ВВГD եպիսկոպոսին սրբոյ Խադայ (В Խաթա, Г Խաթայ)։ 13 БВГD աշխարհին, БВ Հաքըստուն (Г Հաքստուն, D Հանգստուն) փխ. Հակոտուն։ 13—14 БВГD գիւլուլայ։ 14 БВ մինչ ի Բալու, ГD ի Բալու։ 15 ББГD գեղեցիկ։ 16 ГD ի լի, ББ գեղորայք, Г գեղօրեայք, D գեղօրայք։ 18 D ի (արևմտից) չիք, БВ յարևմտից։ 19 ВВ Հարք փխ. Հայք, БВ բազում։ 21 БВГD գիւղաքաղաք, ГD յափն Եփրատայ, БВ Եփրաթայ։ 22 БВГD որ է այժմ տեղի։ 23 А անփոյգ փխ. անքոյթ, Г տեղիք մինն է անքոյթ։ 24 БВГD միւսն։ 25 ГD յուսաւորչէն, D ի (սրբոյ) չիք, ГD սրբոյն. ВВГD միւս։ 28 ГD այնմիկ փխ. այն, Г Աթենաթորոսի, D Աթենադորոսի։ 29 Б ախտայժէտեաց, В ախտաժէտեաց։ 30 БВ սուրբ չիք, վկայի Նորին։ 31 ВВГD Ցեկեղեաց։ 32 ВD ի Դ փխ. ԻԴ։ 33 БВ գըմպէթայարկ։

որբոց վարդապետացն Արիստակէսի և Մեծին Ներսէսի ի Թիլն աւանի. և է տեղիք չարչարանաց սրբոյն Գրիգորի մերոյ Լուսա[ւ]որչին, որ այժմ Տղայ Լուսաւորիչ կոչեն գեղին այնմիկ, զի անդ ետ Տրդատ երկոտասան չարչարանք սրբոյն Գրիգորի Բ (2) ամ. և յետ Բ (2) ամացն ապա ուղարկեաց ի Խոր Վիրապն, զի որպէս գրեալ կայ ի լիակատար պատմութեանն իւրում[6]: Եւ ունի քաղաք մեծ Հայոց դԵզնկայ, որ լի է ամենայն բարութեամբ, բամպակօք, այգեստանօք և մրքարեր ծառօք: Եւ կայ ի մէջ քաղաքին այժմ Ե (5) եկեղեցի || քահանայիւք և ժողովրդեամբ լի: 4ր Եւ է գամբարան սրբոց վարդապետացն Յօհաննէս Պլուզին, որ «Լուսաւորչի անձինքն» է ասացեալ և Կիրակոս վարդապետին, որ «Արեելքն» է ասացեալ[0], և Կեղեցի Ղուկաս վարդապետին, որ զՀռոմայեցոց տումարն և այլ բազում ոտանա[ւ]որս է շարադրեալ և Կիլիկոյ Մինաս կաթողիկոսին, որ մականուամբ Քացախ կոչիւր, զի անսաք աչօք մերովք և լուաք զդաս և զքարոզութիւն նորա ի քաղաքս Արզրում, և գնացեալ Եզնկայ էառ վախճան ՌՁԱ (1632) թվին և եդեալ կայ ի դուռն սրբոյն Սարգիսի, հետ Մեծին Ղո[ւ]կասու[1], որ յար և նման էր առաջին սրբոց հայրապետացն աստուածաբանութեամբ և սրբութեամբ լի: Եւ կայ ի վերայ ճանապարհին վանք մի հռչակաւոր, որ Մխա[ւ]որի ի սուրբ Կարապետ անուն, առ ստորոտով լեառն մեծի, որ Ջարտախլու կոչեն, որ գնացեալ սինօռն հասանէ մինչև ի Շիպ Ղարահիսարն, որ է Կողոնիայ:

Եւ անտի յառաջ գնացեալ ի միուս կողմն հասանէ յերկիրն Դարանաղեաց, որ ունի գիւղք և աւանք և ունի բերդ ամուր և անառիկ ի վերա գետոյ[ն] || Եփրատայ, զի ինքն Տրդատ շինեաց 5ա և ետ անդ զԱշխէն տիկինն և քուր իւր զԽոսրովիդուխտն: Եւ է յոյժ վայելուչ և մրգաբեր փոքրիկ քաղաք և ընակութիւն ազգիս Հայոց. և ունի պայծառ եկեղեցիք և վանորայք. և լինի յոյժ ախորժ [և] զարմանալի պանիր, որ ի Ստանպօլ և Արզրում փաշային աղերս կու մատուցանեն: Եւ անդ է լեառն Սեպուհ դամբարան Լուսաւորչին մերոյ և սրբոյ կուսին Մանիայ: Եւ անդ կախեալ կայ յօդն Հաւհալի թուրն Տրդատայ, զոր խաչ ձևացոյց սուրբն Գրիգոր, որ գնացեալ արժանաւորք տես[ա]նեն զնա, որպէս և Պլուզ վարդապետն շարադրեալ է յերդ շարականին ասելով. «Զէնն արքայական սպանման գործի կենաց արքային ի կենաց»:

1 BB հայրապետացն փխ. վարդապետացն: 2 BB սրբոյն չիք, B մեր: 3 Б Տղա, БВГD այնորիկ փխ. այնմիկ: 4 БВГD զի Տրդատ արքայն անդ ետ, B Բժ փխ. Երկոտասան: 5 AB և չիք, D զի չիք: 6 Б կտ, ГD ի (լիակատար) չիք: 7 ГD Հայոց չիք, B դԵզըն-կա: 9 Г ժողովրդեամ[բ]: 10 Б Յովհաննէս, B Յոհանէս, ГD Յոհաննէս: 11 ГD Լուսաւորչին: 12 D և (Կեղեցի) չիք: 13 ГD տօմարն, A շինեալ փխ. շարադրեալ: 14 ГD Կիլիկիոյ: 15 ГD զդասս: 16 БВ նորին փխ. նորա, B Եզըընկա, B Եզնկայ: 17 БВ թվականին, D թուին, Б կա, БВГD Սարգսի: 18 ГD առաջին չիք: 19 Б կա: 20 D որ (Մխա[ւ]որի) չիք, БВГD ի չիք, ГD Մխաւոր: 21 D յերին: 22 D Շեպ, 24 БВГD միւս, ГD երկիրն: 25 D ունի չիք: 26 B Եփրաթա: 27 БГD եդ փխ. ետ, БВD քոյր, Г զքոյր: 29 БВ ունին, Г վանորեայք: 30 D յԱրզրում: 32 БВГD Մանեայ: 33 Б կա: 34 A և փխ. որ, ГD արժանաւորքն: 35 ГD յերգս: 36 Б ըսպանման, B ըսպանմանն, ГD սպանմանն, ГD ի (կենաց) չիք, БВ ի կենաց գործիս նուիրեալ:

Եւ ի մէջ ձորուն է անդ գերեզման որդոց և Թոռանց սուրբ Լուսաւորչին ի Թորթան։ Եւ կայ անդ վանք մի Աւաք, զոր սուրբ առաքեալն Թաքէոս հիմնարկեալ է, Եւ յորժամ էջ սուրբն Գրիգոր զայր ի վայր անհուն լերինն ի վերայ ծնկանցն, ‖ որ այժմ 5ր Գոհանտմ ասեն, զի կամէր այնպէս գնալ ի սուրբ Յերուսաղէմ, վասն հօրն իւրոյ Թողութեան Անակայ, և յորժամ էհաս ի ձորն ոչ հանդուրժեաց միածինն Աստուած ընդ չարչարանս ծառային իւր, այլ առաքեաց սերոբէս, զի ոչ եթող Թոյլ, այլ ասեն Թէ «Աննհար է արդարանալ հօր քում, ի զուր մի աշխատիլ, համարեցաւ քեզ Աստուած արդարութիւն»։ Եւ անդ շինեաց վանք մի յանուն Սերոբէից, ուր ետես, որ է միաբանակեցայց տեղիք մինչև ցայսօր։ Եւ գնացեալ հասանէ մինչ ի Քարաձորն Ցակնայ և Արարկերու։ Եւ յետ կոյսն ունի Կամախ Գ (3) գաւառս՝ Հասանօվայ, որ բազում գիւղք կան, և Արմաաններն, որ դնացեալ հասանէ մինչև ի Տիւրիկէ, և միւսն է Ղուառւչան, երկիր խոր և Թաւամայրի, որ ի գրոց Աղնդիք ասեն։ Աստի էին և սուրբքն Եւստատիասրիքն, որ գնացեալ ի Սեբաստիայ մարտիրոսացան վասն Քրիստոսի։

Եւ անտի շրջեալ դէպ ի կողմն հիւսիսոյ են գաւառք զարմանալիք, առաջինն է երկիրն Գայլ գետոյ[8], որ ունի գիւղս բազում ձորամէջս, մայրիս և ‖ անտառս յոլով, և ունի գուղաքաղաք զԿարմրի[9], և բնակիչք երկրիս Հայք և Տաճիկք են։ Եւ աստի ելանէ Գայլ գետն և դիմեալ ի յարեւմուտս գնացեալ հասանէ ի Նիկիսար քաղաքն։ 6ա

Եւ յետ այնորիկ երկիրն է Շէայեայնու[10], ունի բազում գիւղք և աւանք, և բնակիչք երկրիս Հայ բազում, Հօռոմք և Տաճիկք ևս։ Եւ է յոյժ Թաւ մայրիք, սար և ձոր անտառախիտ, և ունի բերդ զՇէօիայն, և գնացեալ հասանէ մինչև ի դաշտն Ցաշխարհու։

Եւ անտի շրջեալ ի ձորն Կուկվանցու, որ բնակութիւն է Հոռոմոց և ունի գիւղք և աւանք և վանօրայք բազում,·[և] բերդ անառիկ զԿուկվանց, և ունի սահման մինչև ի Սև ծովն մեծ, որ է Պոնտոս։

Եւ անտի ուղիղ ի կողմն հիւսիսոյ ձորն է Ծանախոյ, ունի գիւղք և փոքր բերդորայք, վանորայք և հրաշալիք անապատք, Թադաւորաշէնք Հոռոմոց, որ բնաւ կին և անմորուս մարդ ոչ

---

1 БВГD ձորոյն, D անդ չիք, որդւոց, БВГD սուրբ չիք։ 2 Б կա։ 3 БВ Թադէոս է հիմնարկեալ։ 4 ГD ծնկացն։ 6 БВГD Թողութեան հօրն իւրոյ։ 8 БВГD սերովբէս։ 9 БВГD աշխատիր։ 10 БВ Աստուած քեզ։ 11 В սերովբէիցն, ГD սուրբ սերովբէիցն։ 12 D ի (Քարաձորն) չիք, БВ Ակնա, D Ակնայ։ 13—14 ВГD Հասանովայ։ 14 БВ գիւղք բազում։ 15 БВ Տիւրիկի, ГD Տիւրկէ, ГD և միւս կողմն է փխ. և միւսն է, А իւր փխ. խոր։ 16 БВ Արգնցիք, D ասին, БВ (էին) և չիք։ 17 Б Սեբաստիա։ 18 ГD վասն անուանն Քրիստոսի։ 20 Г առաջին։ 20–21 Г բազումս։ 21—22 БВГD գիւղաքաղաք։ 22 БВГD Հայ։ 24 D Նիկեսար, БВ քաղաք։ 25 БВ Շէոիանու, Г Շէայեանու, D Շէոյիանու, БВГD ունի չիք։. 28 БВ Տաճիկ են։ 27 ГD են փխ. ևս, БВ մայրի։ 28 БD զՇէոիան, В զՇեոիան, Г զՇէոիեան։ 28—29 БВ Աշխարու։ 31 ГD վանորեայք (D վանորայք) բազումք, БВГD և ունի բերԹ (D բերդ)։ 32 БВ մինչ, D ի (Սև) չիք։ 35 Г բերդորեայք վանորեայք, БВГD հրաշալի։

մտանէ անդ, որք այժմ կան անդադար ի փառաբանութիւն Աստուծոյ։ Եւ ունին քաղաք զԿումուշխանան, որ է վայելուչ և մրգաւէտ վայրք. և բնակիչք սորա Հայք և Հոռոմք բաղում, և || 6բ կայ եկեղեցիք հրաշալիք Հայոց և Հոռմոց։ Եւ ելանէ աստի ոսկի և արծաթ ընտիր, բաղում, նաև պղինձ, արճիճ և երկաթ բաղում, որ Արզրում և շրջակայք նորա լնուն։ Եւ ունի ձորս այս սինօռ մինչև Տրապիզօն։

Եւ անտի շրջեալ ի միւս կողմն հիւսիսոյ է երկիրն Խախտեաց, որ ունի բաղում գիւղք և աւանք և վանորայք և է այժմ ամենեքեան միաբանակեցաց տեղիք և վարժարան աստուածաբան վարդապետաց։ Եւ է սա քաղցր և համեղ երկիր և Հայոց բնակարան, և ունի բերդ մի պարսպաւոր և անառիկ ի վերայ բարձրաբերձ վիմի հաստատեալ, որ այժմ Բաբերդ ասեն քաղաքին այն։ Եւ անցանէ գետն Ճորոխ ընդ մէջ քաղաքին, և ելանէ ձկունք անթիւ և զանազան։ Եւ են բնակիչք սորա մարդասէր և հիւրընկալ քրիստոնեայք և ծաղրերես քահանայք և տօվաթաւորք։ Եւ ունին այժմ եկեղեցիք Դ (4) զարմանալիք տեսողացն, որ կան անդադար ի փառաբանութիւն Քրիստոսի։ Եւ է երկիրս այս հացալից, ջրաւէտ, խոտալիր, ոչխարօք և անասնօք ի լի, իւղ և մեղր || սպիտակ և անթիւ, որ հիանալի է տեսօղացն. 7ա և ունի սինօռ մինչև ի Հօռմոցն և Սև ծովեափն և Ըսպեր։

Եւ անտի հասանէ ի ձորն մեծ և անհուն, որ ունի դղեակ մի պարսպաւոր շինեալ ի վերայ Ճորոխ գետոյն, որ այժմ Սպեր ասի. և է սա պարոնանիստ, և ունի գիւղս և մաղրայս ԳՃ (300) և մայրիս յոլով, է և ձորն այգիք անթիւ և ծառոց պտուղք յոլով համով և հոտով։ Եւ ունի վանք մի հրաշալի, անուն սրբոյն Յովհաննու Մկրտչին կառուցեալ, որ է այժմ միաբանակեցաց տեղիք. և ամենայն տարի սուրբ Խաչվերացի տօնին գնան անդ ուխտաւորք բաղումք։ Եւ ունի ի գլուխս լերանցն եայլաներ յոյժ խոտաւէտ և ջրարուղ, որք բաղում հօտք ոչխարաց և անասնոց ճարակա[ւ]որեալ լինի, և է իւղ և մեղր անթիւ, և բնակիչք երկրին բովանդակ Հայք. որ գնացեալ հասանէ մինչև ի գիւղն Խոտեջուր. և ունի վանք երկու[11], և այլ եկեղեցիք բաղում յոյժ, որ այժմ աւերեալ և ամայիք կան ի ձեռս Տաճկաց։

Եւ միւս ձորն շրջեալ որ է Իշխ[ա]նանիստ, որ ունի բաղում

---

1 ID փառաբանութիւնս։ 2 ГD ունի, БВ զԳումիշխանան, D զԿիւմուշխանան։ 3 ГD Հայ։ 4 В կա, БВD Հոռոմոց։ 5 Б և (արծաթ) չիք, ГD ելանէ նաև պղինձ։ 6 ВВГD շրջակայքն, D և (ունի) չիք։ 7 БВ մինչև ի Տրապիզոն, ГD մինչև ի Տրապիզոն առ ծովափն։ 8 БВ յերկիրն։ 9 Г վանօրեայք։ 11 Б սայ։ 13—14 В քաղքին այն Բաթերթ ասեն։ 14 D քաղքին այն չիք։ 15—16 ГD մարդասէրք։ 16 D հիւրընկալք։ 17 В դօլվաթաւորք, БВГD զարմանալի։ 18 ГD փառաբանութիւնս Քրիստոսի աստուծոյ։ 21 ВВ ի չիք, В Հոռոմոցն, D Հոռոմոցն, БВ ի Սև փխ. և Սև, ГD ծովու յափն։ 22 D Ըսպիրու։ 24—25 D Ըսպիր ասեն։ 27 БВГD հոտով և համով։ 27—30 տողը АБВ և ունի վանք......ուխտաւորք բաղումք չիք։ 30 БВ գլուխ, ГD յեայլաներ։ 32 БВГD և է չիք։ 33 В գեղն։ 34 ВВГD յոյժ չիք։ 35 БВГD ամայի, ВВ ձեռն։ 36 БВD և շրջեալ ի (ГD ի չիք) միւս ձորն, БВГD որ է չիք։

գիւղք և փոքր ըՙերդորայք և վանորայք ի գլուխս լերանց. և ունի բաղում նայլայ ակնաբուխ անասնոց և խաշանց վաելուչ վայրք, || և ի մէջ ձորոցն է այգիք և բուրաստանք և պտուղք ծառոց 7բ զանազան և անթիւ, և գինի այնչափ յոլով և քաղցրահամ, որ մինչև Է (7) տարին այնպէս բարէհամ և անապական, որ թրվի թէ այսօր հարեալ է ի հնձանէ, որ ոչ սրտի դողումն, և կամ գլխացաւութիւն բերէ, այլ ախորժէ ըմպողաց։ Եւ ունի ձորս այս բերդ անառիկ զԹորթում, որ պարոնանիստ է և իշխօղ է, մինչև ի բերթն Ագրակք առ ափն գետոյն Ճորուխի։ Եւ լինի Թորթումս այս տանձ ևս առաւել խնծոր զարմանալի հոտով և համով, տեսողացն որ հիացեալ տացեն փառս ստեղծօղին Աստուծոյ, որ մէկն այնչափ մեծ է, որ ՄԾ (200) դրամ կշռոյ է, որ է Ա (1) նուկի և է գունն կարմիր կամ սպիտակ յոյժ, որ հանապազ ի Ստանպօլ և ի դրունս մեծամեծաց ընծայ մատուցեալ լինի, որ անուամբ շամալմասի ասեն։ Եւ կայ ի մէջ ձորոյն մեծամեծ վանորայք Վրացի գուզն Թախու[12], Օշկ[13] և Իշխան[14], որ յար և նման ոչ գոյ նոցա, բայց թէ լինի միայն սուրբն Սոփի ի Կոստանտնուպօլիս։ Եւ էին բնակիչք երկրիս || կէսն Հայք և կէսն ազգաւ և կրօնիւն Վրացի, բայց Հայի լեզուաւ խօսէին։ Իսկ ի բազմանալ հագաբացոց ի ժամանակս մեր, ի թվականիս ՌՂԲ (1643) ամին, եղև հրաման մեծ կայսէրէն Ըստանպօլայ ի վերայ մօլլայի միոջ, որ էր յոյժ անուանի և առաջակայ էր քաղաքիս Արզրումայ և փաշանե[ր]ացն, Ջաֆար անուն, յոյժ անիրաւ և չարասէր, որ և սատանայէ ինքն Բէլիար, և յոյժ անիրաւ, ժանտաբարոյ և քրիստոնէից թասիպ, յաշխարհագիր առնել զբոլոր շրջակայ եր[կ]իրս Արզրումայ։ Եւ ելեալ արար դաւտար և կապեաց ծանր խարաճ և ելից մեծ և փոքրն ի թագա[ւ]որական դաւաարն. և երկիրս այս՝ Թորթում, վասն խարաճին վրացիքն ամենայն յերկուցեալք ի յահէն դարձան յօրէնսն Մահմէտի. ապայ ազգս Հայոց մնացին ի վերայ հաւատոցն ողորմութեամբն Քրիստոսի և աղօթիւք սուրբ Լուսաւորչին։ Եւ ձորս այս յոյժ բարեաւ լի է, որ քաղաքս մեր Արզրում, Բասեն և շրջակայ գաւառքն ամենայն աոքա կու լընուն՝ գինիաւ, խաղողով և ձիթապտղով և մրգով ամենայն։

Եւ ունի || աղահանք Բ (2), Ա (1) հատ և Ա (1) քար, որ 8բ բազում տեղիս լնու առատօրէն։

1 Г բերդորեայք և վանորեայք։ 2 Б եայլանի, ГD յեայլանի։ 4 БВ և (գինի) չիք, БВГD անչափ։ 5 ГD տարի, БВГD բարէհամ չիք, անապական է փխ. և անապական, БВ թվի, ГD թուի։ 6 ГD և չիք։ 7 ГD ըմպողացն։ 8 ГD բերթս (D բերդս) անառիկս, D զԹորթումս 9 БВГD Ագրակ, ББ Ճորոխի, ГD յափն Ճորոխ գետոյն։ 10 БВГ Թորթոմս։ 11 ГD տեսողացն չիք, ստեղծօղին չիք։ 12 D կշռէ։ 13 Г մէկ փխ. Ա, БВ գոյնն։ 14 Б ընծաւ 15 БВD շահալմասի։ 16 Г վանորեայք, БВГD գիւղն, D Ոգկ փխ. Օշկ։ 17 БВГD սուրբ, Կոստանդինուպօլիս։ 18 ГD Հայ, և կէսն չիք, և կէսն կրօնիւք Վրացի։ 19 БВГD հագաբացոցն։ 20 D թուականիս։ 21 БГ Ըստամպօլա։ 22 Б Արզրումա, ГD փաշաներաց։ 23—24 տողը БВГD յոյժ......անիրաւ չիք։ 24 Б քրիստոնից։ 25 БВ աշխարհագիր, Б շրջակա։ 27 БВГD փոքր։ 27—29 БВГD և երկրիս վրացիքն ամենայն երկուցեալք (ГD յերկուցեալք) յահէ խարաճին դարձան յօրէնս փխ. և երկիրս այս Թորթում...դարձան յօրէնսն։ 29 БВГD ապա, БВ ի չիք։ 31 D որ չիք, ГD զքաղաքս։ 32 Б շրջակա։ 32—33 БВГD լնուն գինով, (ГD գինեաւ)։ 33 В և (ձիթապտղով) չիք, ВГD ամենայն մրգով։ 34—35 տողը БВГD չիք։

Եւ անտի շրջեալ ի կողմն յարևելից է գաւառ մի մեծ և բազում գիւղք և բնակիչք երկրին Հայք և Վրացիք. և ունի բերդ մի բարձր և անառիկ, որ այժմ Մամրվան[15] կոչեն։ Եւ է ի մէջ բերդին վանք մի փառաւոր, որ անուն սրբոյն Գէորքա է կառուցեալ, որ այժմ Կուլէթ ասեն, և է այժմ պարոնանիստ և հացալից երկիր և կարի խոտաւէտ և ակնաբուխ սառն ջրոց յոյժ. և է ի մէջ մայրի անտառաց, որ փիճի ասեն և ազատմայրի կոչեն, որ ոչ սկիզբն տեսեալ ոք կայ և ոչ ծայրն հասեալ ոք, զի ասեն թէ գնացեալ հասանէ մինչև ի Կովկաս լեառն և ի դուռն Ալանաց ի Կասպիական ծովն, որ է Կիլան։ Եւ երկիրս այս լի է պտճարեղինօք և ամենայն բարութեամբ և ունի սինօռ մինչև ի Ցօխտիք[16] քաղաք և միուս կողմն մինչ ի Բասեն։

Եւ անտի շրջեալ ուղիղ դէպի արևելս է երկիրն Վերին Բասենոյ բազում դիւղք և աւանք. և ունի ծաղկաւէտ լերունք, ջրալից, և տուն հացի, անասնօք և ոչխարօք ի լի, իւղ և ‖ մեղր 9ա իբրև աղբիւր յորմէ առատ հոսի, գեղեցիկ և վարժք քէհլան երիվարք բազում, որ տեսօղացն հիացեալ փառս տան Աստուծոյ. նաև գեղեցիկ շինեն դոյլ և կոյժ փայտեայ զանազան, յոյժ օգուտ է և ախորժ է ըմպօղաց ջուր ի նմանէ. և են բնակիչք երկրի Հայ և Թուրք սակաւք, և ունի մեծ բերդ պարսպաւոր ի վերայ վիմի հաստատեալ, որ Հայ բառով Դարոնք կոչեն, բայց եկեղեցի մի է, փայտաշէն և յոյժ մեծ, որ այժմ Հասանղալայ կոչի, որ անցանէ գետն Արազ ընդ դուռն քաղաքին. և է առ ափն ջրոյն Գ (3) ջերմը ջրոյց բղխեալ, որ շինեալ է յարկս քարատաշ վիմաց, որ յոյժ ցաւոց և ախտացելոց և օգտակար է մտելոց ի ջուրն մերձ կամրճին. և ելանեն ձրկունք անթիւ և զանազան ազգի ազգի համեղ ճաշակօղացն նաև ճանառ յոյժ։ Եւ է բերթս այս մեծ պարոնանիստ և հեծելօք ահաւոր խմբօղ ի մարտ պատերազմի։ Եւ ունի վանք հռչակա[ւ]որ և գմբեթայարկ շինեալք ի մօրէն Մագ[ի]ստրոսին, որ անուն սուրբ կուսին Մարիամու է կառուցեալ. անդ է հրաշալի պատկերն պահապան ազգին Հայոց, որ է ‖ այժմ բազում միաբանակեցաց տեղիք, գրէ 9բ

---

2 БВ երկիրն ամենայն։ 3 БВ Մամրրվան։ 4 D յանուն, БВ Գէորգայ։ 5 D Ուլէթ փխ. Կուլէթ, БВГD ինքն փխ. այժմ։ 6 Б խոտաւէտ։ 7 D անտառացն։ 8 Б ըսկիզըն, ГD սկիզբն, Б կայ, БВ զծայրն, БВГD (հասեալ) ոք չիք։ 9 БВ մինչ, БВГD և (ի) չիք։ 11 БВ մինչ։ 12 Г ի (Ցօխտիք) չիք, ГD Օխաիք, БВГD միւս կողմն, ГD մինչև։ 13 БВD դէպ, A երկիրն չիք։ 16 БВ յորզառատ փխ. յորմէ առատ, ГD յորմէ առատ հոսի չիք, БВD վարժ։ 16—17 БВ քէհիլան։ 17 БВ Աստուծոյ փառս տան, ГD տային։ 19 БВ որ յոյժ, ГD է (և) չիք, БВ է փխ. են։ 20 БГD երկրին, БВГD սակաւ։ 21—23 ГD Հայ բարբառով կոչեն այժմ Դարոնք և Թուրք բարբառով Հասան Ղալայ (D Ղալա) կոչի փխ. Հայ բառով......Հասան Ղալայ կոչի։ 22 БВ բայց եկեղեցի մի է փայտաշէն և յոյժ մեծ չիք։ 23 D որ չիք։ 24 Г յափ, D յափն, БВГD Գ չիք, ջերմ ջուր։ 24—25 ГD բղխեալ որ շինեալ է յարկս քարատաշ վիմաց չիք։ 25 БВ վիմաց չիք, БВГD ախտաժետեաց, և (օգտակար) չիք։ 26 БВГD մտելոցն, մերձ կամրճին չիք։ 27 БВГD զանազան չիք, նաև ճանառ յոյժ չիք։ 28 В հեծելեօք։ 29 ГD մարտ չիք։ 29—30 БВD գմբէթայարկ շինեալ։ 30 Մաքիստրոսէ, D որ չիք, БВD յանուն սրբոյ (D սուրբ)։ 31 D (Մարիամու) է չիք։ 31—32 БВГD անդ է հրաշալի...ազգին Հայոց չիք։ 32 БВГD գրէ չիք։

թէ երկիցս կատարեցաւ. օրհնութիւն սուրբ մեռոնին և է գերեզման Մագիստրոսին։ Եւ ունի թէմ երկոտասան գաւազանի տեղ։ Եւ ի գլուխ լերինն վանացս այսորիկ րուսանի զարմանալի ծաղիկն համասփուռ ԺԲ (12)-ն տարին մի անգամ, որ թէ հանդիպեսցես դու համասփռի պատմութեանն, գտանես ի լերինս այսմիկ, որ Գարու[ն]ք կոչի։ Եւ ի հարաւոյ կողմն ի մէջ ձորակին ունի րերթ մի փոքրիկ, որ հասեալ է մինչև ի յօդս վերին անահ ի մեքենայից, որ Ցաւնիկ[17] կոչի, անտի էր ճգնա[ւ]որն Գառնիկ, որ անփոփեաց տեսլեամբ զմարմին Լուսա[ւ]որչին մերոյ ի Թորթան։ Եւ ունի սինօռ Բասենս այս Վերին մինչև ի Զառափխանան և ի Կաղզվան։

Իսկ Ներքին Բասենն է պարոնանիստ. և ունի գիւղաքաղաք զԾորասան առ ափն Երասխայ. և ունի րերթ Զիւին. և ունի ջերմնրուղ ջուր, որ բազում ցաւոց օգտակար է, Մէժրնկերտ և Կէչէվան. և է ի մէջ րերդին գերեզման Խաչատուր Կէչեռեցուն։ Եւ այլ բազում գիւղք ունի և մայրիք, որ գնացեալ հասանէ մինչև ի Կարս, ի Պարտէզ[18] ‖ և ի Սօղանլուն։ 10ա

Եւ անտի ի լեառնակողմն հարաւոյ են գաւառք Բ (2), որ ասեն Ղարայ-Եաղի և Խալի-Եաղի, են բնակարան և եայլայ Քրթայ, որ հանապազ վրանօք Կեգարու շրջին, ոչխարօք և անասնօք ի լի. և գնացեալ հասանէ մինչ ի լիառն Սուկաւէտ, որ ի գլուխ լերինն է գերեզման սրբոց Սուքիասանցն, որ երևի արիւնն ի վիմին կանաչ-կարմիր և այլ ազգի ազգի երանգ գունոյց և է մինչև ցայսօր, որ ամենայն տարի յաւուր կատարման սոցա բղխէ աղբիւրս իբրև զպրօպատիկէ աւազանին[19], ով ոք որ համդիպի նոյն օրն բժշկութիւն լինի ամենայն ցաւոց և փարատումն ախտաժէտաց, որ այժմ Քօսատաղ ասեն։

Եւ ի ստորոտով լերինն է երկիր մի մեծ և դաշտային, ունի գիւղք և աւանք բազում և բերթորայք անառիկք առ ստորոտով լերանց Մասիսոյ, և ունի րերթ պարոնանիստ որդոցէ որդիք Շաւշիկ, Պայաղիս, Խամուր-ղալան[20] և զԴիատին ի գլուխս դաշտին. աստի ելանէ մեծ մասն Եփրատայ և քուքուրդ բազում. և գնացեալ ի մէջ դաշտին և լինի գետ մեծ և անհուն։ Եւ երկիրս այս ի գրոց ‖ որ Վաղարշակերտ կոչի և այժմ Ալաշկերտ 10բ

---

1—2 БВГD թէ երկիցս...... Մագիստրոսին չիք։ 2 БВ ԲԺ տեզ գաւազանի, D տեզ չիք։ 3 A ի չիք, БВГD լերին վանքիս։ 4 В ԲԺ-ն, ГD ԲԺ։ 5 БВГD համասփիւռի։ 6 D Դրունք։ 7 БВ մինչ, յօթն, ГD յօդն, БВГD վերին չիք։ 10 БВ մինչ։ 10—11 ГD Զարափխանան և ի Կաղզվան և ի Թարգմաննն։ 13 ГD յափն, Б Երասզա, В Երասզայ։ 13—14 БВГD և ունի ջերմնրուղ ջուր որ բազում ցաւոց օգտակար է չիք։ 14 ГD Մէժէնկերտ։ 15 БВ Կեչառեցոյն, ГD Կեչեռացուն։ 18 D երկու փխ. Բ։ 19 БВD Ղարա, D Խեալի, ГD յեայլանի, A Թրքաց փխ. Քրթաց։ 20 БВГD վրանաւ։ 21 ГD մինչև, D որ չիք։ 22—24 БВГD որ երևի արիւնն......և է մինչև ցայսօր չիք։ 24 БВ յամենայն, БВ նոցա փխ. սոցա։ 24—25 БВГD աղբիւր։ 25 Б զրրոյպատիկէ, В զրրոպատիկէ, D զպրօպատիկէ, Б աւազին փխ. աւազանին, A օվ։ 27 БВ ասի։ 28 БГ դաշտաքն։ 29 D ունի չիք։ 29 Г ունի գիւղք առ ստորոտով գիւղք և աւանք բազում, Г բերթորեայք, Տ րստորոտովն, ВГ ստորոտոմն։ 30 Б մաւրն մեծին Մասիսոյ, ВГD մօրն Մասիսոյ։ 31 Б Պայեազիտ, В Պայեազիտ, D Դիազին։ 32 Б Եփրատա։ 34 БВГD որ չիք, Г Վաղարշկերտ։

սաի։ Եւ է յոյժ խոտաւէտ, ջրալից և հովիտ. անասու[ն]ք և հօտք ոչխարաց իբրև զաստեղս երկնից սփռեալ կան ընդ երեսս դաշտին, իւղ և հաց բազում, ազգի-ազգի գեղեցիկ և տաճիկ ձիան, որ պարոնաց և փաշաներաց հեծանելի։ Եւ իշխան երկրիս է մեծ պարոն և բազում զօրաց տէր. և ունի սինօռ մինչ ի շրջապատն Մասիսոյ, երկիրն Երէւանայ և միուս կողմն մինչ ի Արտազ, որ է Մակու և Ցապաղան։

Եւ աստի եկեալ դէմ Թագաւորն Տրդատ ամենայն զօրօքն Հայոց Լուսաւո[ր]չին մերոյ Գրիգորի, որ եկն ի Ղայսարու կաթողիկոսութեան կարգօքն հանդերձ Անգեղտան իշխանաւն, որ ունէին ընդ իւրեանս զմարմին սրբոյ Կարապետին և Աթանագինեայ հայրապետին, որ եկեալ հանգուցին ի Տարօն տեսլեամբ հր[ե]շտակի և հրաման տուեալ ազգին Մամիկոնէից, զի շինեսցեն վըկայարան ի վերայ սրբոցն։ Եւ ելեալ սուրբն Գրիգոր հանդերձ իշխանօքն Հայոց հասեալ ի Վաղարշակերտ և տեսեալ զմիմեանս՝ հայրապետն և Թագա[ւ]որն յոյժ ուրախացան և բանակեալ առ ափն Եփրատայ զօրքն ‖ և ամենայն Նախարարքն Հայոց օթեցան 11ա յայն օր։ Եւ ի վաղիւն առեալ սուրբն Գրիգոր զձեռանէն Տրդատայ իջոյց ի ջուրն և մկրտեաց և Յօհաննէս անուանեաց, Ճ և ԻՌ (120000) ոգիս զամենսեան ազգս Հայոց առհասարակ։ Եւ անդէն յետս արգելաւ գետն յորժամ զսուրբ մեռոնն էհեղ և լոյս պայծառ և ահագին կամար կապեաց ի վերայ ջրոյն և ամենայն հաւատացելոց, և ապա մատոյց փրկագործ և սոսկալի և սարսափելի, զահաւոր զխորհուրդ սուրբ պատարագն ի մէջ վրանին, այս է չատրին և հաղորդեաց զամենսեան զահաւոր և զկենարար մարմնոյ և յարենէ որդոյն Աստուծոյ, զի Լուսաւորիչ աստ անուանեցաւ, որ և լուսաւորեաց զազգս Հայոց հոգով և մարմնով։ Եւ կայ ի մէջ դաշտին գիւղ մի մեծ Բլուր[21] անուն, անդէն վախճանեալ սուրբ հայրապետն Իսահակ Պարթևն, որ էր Թոռին Թոռի որդի մեծ հայրապետին՝ սրբոյն Ներսէսի։ Զի յետ սորայ յազգէն Լուսաւորչին ոչ ոք նստաւ յաթոռն հայրապետական, զի զմարմին սրբոյն Սահակայ Ալաշկերտու տարան ի Մուշ և հանգուցին ի գիւղն Ցաշտիշատ. ‖ և է այժմ մեծ վանք, հռչակաւոր, 11բ շինեալ կայ ի վերայ նորա։

---

Ներսէսի է հիմնարկեալ, որ է և պատմիչն սաէ[46]. Գ. է Խաչկա-
ւանք[47], որ և մասն անդ է ձեռամբ որդոյ Թոգաւորի ևս
Յօհաննէս եպիսկոպոսին. ևս Դ. վանքն հոչակս[ւ]որ ի մօրէն
Գրիգորի Մագիստրոսի է, որ անուն սրբոյ կուսին Մա-
րիամու ասի Սպիտակավանք, անդ է Է (7) վիրոց պատկերն ըստ
Ղուկասու նըկարեալն և է անդ պահապան ազգիս Հայոց. ևս Ե.
վա[ն]քն է հրաշալի սպիտակ և սիաւ, որ է Բաշխենց վանքն, անդ
է մասն կենաց փայ[տ]ին, մածեալն աստուածային արեամբն, որ
կայ ի Նե[ր]քին Բասեն. ևս այս հրաշալի տաճարքս կան անդա-
դար ժամ և փառաբանութիւնն Աստուծոյ, յարաժամ սաղմոսեր-
գութիւն և պատարակ մատչին Աստծուն համայնից օրհնեն և
փառաբանեն նաև ազգն քրիստոնէից հանդերձ, որ է օրհնե[ա]լ
յաւիտեանս. ամէն։

Եւ ունի || քաղաքս այս և ունի աթոռք Գ (3) այսինքն ևս 24ա
Մուտուրկու վանք, որոց առաջին և գլուխ է ի քաղաքիս աթոռ,
սուրբ Լուսաւորչի վանք, որ ևս ասի Մուտուրկու վանք, որ է
այժմ տեղիք միաբանակեցաց, որ է յարաժամ ի մէջ սաղմոս-
երգութեանն ժամ, պաշտօն և պատարագ, զոր տէր Աստուած
հաստատուն պահեսցէ ի տէր ամենայն ժամ։ Ի Թվականիս մերոյ
ՌՂԵ (1646), որ եկն Սասնպօլցի Սարգիս վարդապետն սուրբ
Էջմիածնայ նուիրակ, որ անդ էր վարժեալ և ունէր ձայն ահեղ

1 D գինւոյ, БВГD փայտ։ 2 ГD երկայն փայտն, БВ գրկաչափ մի, լայն և չիք, 3 ГD չկա փխ. ոչ գոյ, որ ի տեսանելն։ 3—4 Б հիանա։ 4 Б մնա, D մէկ, Г Բ ղուռուշ, D երկու ղուրուշ։ 5 БВ և կամ, D վեց ռուպ կամ ութն ռուպ, БВГD ձի, D և եզն էշն, БВ գունակ, ГD գնով։ 6 Б Ա չիք, լիտր, В Ա լիտրն չիք, ГD կէս կէս ղուրուշ Ա լիտրն, Б գինին, անթիւ չիք, БD սոքա։ 7 БВ D և այսպէս։ 8 БВГD պատուական, սմա։ 9 БГD տեառնէ, ЕВ շնորհք, և (զտեառնէ) չիք, ГD շնորհք և տեառնէ։ 10 БВГD ամէն չիք։ 11—26 տողերը БВГD չիք։ 27 БВ և երկիրս փխ. այս և ունի, ГD և ունի քաղաքս և եր-կիրս, և ունի չիք, D երեք։ 27—28 БВГD այսինքն ևս Մուտուրկու վանք չիք։ 28 D ի (քաղաքիս) չիք։ 28—29 ББ և միւս վանքն է Մուտուրկոյ որ յանուն սուրբ լուսաւորչին է կառուցեալ փխ. որոց առաջին և գլուխ......Մուտուրկու վանք։ 29 D վանքն, Г ևս չիք, ГD Մուտուրկու վանք ասեն։ 30 БВГD միաբանակեցաց տեղիք։ 30—32 БВГD որ է յարա-ժամ......ժամ չիք։ 33 БВ ՌՂ և Ե, ГD ՌՂԷ փխ. ՌՂԵ, БВГD որ չիք։ 34 Б Էջմիածնա։

և զարմանալի անուշ և համեղ, որ և հաւանեցոյց ղքաղաքս և զերկիրս ճարտար քարոզութեամբն իւրով. և եպիսկոպոսն Ղազար իւրովի կամօքն հրաժարեցաւ և ետ ի նայ զվանքն. և նա դարձաւ առ կաթողիկոսն Փիլիպպոս և էառ հրաման և կոնտակ նստիլ մեծագահ աթոռն Թէոդուպօլիս, և եկեալ արար բազում շէնք և շինուածք ձեռնտուութեամբ քրիստոնէից և վաճառականաց քաղաքիս և յոյժ աշխատութեամբ եբեր ջուր ե եհան ի դուռն վանացն աղբիւր, եւ Ա (1) ջաղացք[18] մի. յոյժ վայե || լուչ և զարմանալի 24բ տեսօղացն ի վերայ կօչկօչան գետին եզերն և այլ ուղութիւնս ե ի բարի կարգս և կրօնս արար ի սուրբ ուխտս այս, զոր տէր Աստուածն համայնից անշարժ և հաստատուն պահեսցէ մինչև ի կէտ կոչման իւրոյ. ամէն։

Եւ ի միուս վանքն է Հնձուց Կարմիր վանքն, որոց և յիշատակէ Մօսէս Խորենացին. զոր ե հիմնարկեալ է մեծին Ներսէսէ կաթողիկոսէ, որ թոռին թոռ էր սրբոյն Գրիգորի մերոյ բազմաչարչար նահատակին, յարի ե քաջ լուսաւորչին. զի յորժամ թագաւորն Հայոց Արշակ առաքեաց զՆերսէս իշխանօք և բազում զօրօք ի Կեսարիայ և եկեալ գնացին անդ, ուղղ ե երկրպագութիւնն մատուցին։ Եւ սուրբ հայրապետն [Եւ]սեբի տեսեալ զհրաշադեղն Ներսէս և փառաւոր իշխանքն ընդ նմայ, յոյժ ուրախացաւ և պատրաստեաց ձեռնադրել զՆերսէս կաթողիկոս Հայոց ընդ նմին և Բարսեղ Ղայսար[ե]ցին, զի յորժամ սուրբ զօծումն ընկալան սուրբ հայրապետէն նոյն ժամա[յ]ն յայտնապէս հոգին սուրբ Աստուած էջ ի վերայ սրբոյն Ներսէսի և սրբոյն || Բարսղի, որ 25ա ականերև ամենեքեան տեսին երկոցունցն արժանաւորութիւնն և հիացեալ փառս ետուն Աստուծոյ, որ այնպէսի առաջնոր[դ] ունին սրբազան ազգն Հայոց։ Եւ առեալ զսուրբն Ներսէս իշխանօքն ե ամենայն զօրօքն յոյժ ուրախութեամբ աշխարհս Հայոց մտին. և ամենայն քաղաք ընդդէմ նորա դային ուր և հասանէր

---

1 БВГD զարմանալի չիք, БВ և համեղ որ չիք, ГD և համեղ չիք։ 2 ГD երկիրս։ 3 БВ կամացն, ГD կամօքն, БВГD նա։ 4 БВГD և կոնտակ չիք։ 5 БВ Թէոդուպօլսիս, D Թէոդուպօլսի։ 6—7 БВГD քաղաքիս և վաճառականացն փխ. քրիստոնէից և վաճառականաց քաղաքիս։ 8 БВГD և փխ. եւ, Ա չիք։ 8—9 БВГD մի յոյժ վայելուչ......կօչկօչան գետին եզերն չիք։ 10 БВГD բարի կարգս և կրօնս չիք, ի վանքն փխ. ի սուրբ ուխտս այս։ 11 БВГD մեր փխ. համայնից, անշարժ և չիք, պահեսցէ հաստատուն։ 12 БВГD կոչմանն, БВ ամէն չիք։ 13 БВ որոց առաջին և գլուխն է վանս Հնձուց փխ. և ի միուս......Կարմիր վանքն, ГD ի (միուս) չիք, միւս, D Կարմիր չիք, յորոց։ 13—14 Б և (յիշատակէ) չիք, յիշատակէ և գրէ Մովսէս։ 14 ГD Մովսէս, БВГD և չիք, БВ Ներսիսէ։ 15 БВ մեր։ 15—16 БВГD բազմաչարչար նահատակին յարի և քաջ չիք։ 18 Б Կեսարիա, БВ գնացին հասին անդ։ 18—19 БВГD ուղղ և երկրպագութիւնն մատուցին չիք։ 19 БВГD Սեբի։ 20 БВГD իշխանք, նմա։ 22 БВГD օծումն (ГD զօծումն) սուրբ։ 23 БВГD սուրբ հայրապետէն չիք։ 24 ГD ի վերայ նորա այսինքն սրբոյն Ներսէսի և Բարսղի փխ. սրբոյն Ներսէսի և սրբոյն չիք, զօրօք։ 25 БВ դէմ չիք։ 26 Г այնպէս։ 27—28 БВ իշխանքն։ 28 БВГD և (ամենայն Բարսղի, БВ սրբոյն փխ. ընդդէմ, ГD նոցա երթային փխ. նորա դային, БВГD հանդիպէր փխ. հասանէր։

անդ հիմն արկանէր և շինէր եկեղեցի, օծանէր քահանայս սարկաւագունս և դպիրս, սպասաւորեացեն սրբութեամբ եւ արժանա[ւ]որս ձեռնադրէր եպիսկոպոսս ի վերայ քաղաքաց և վանորէից, շինէր ի վերայ ճանապարհին խաներս և հոգէտունս։ Եւ եկեալ էանց ի գաւառն Դերջանայ և հասեալ ի մօտ դաշտին Կարնոյ, նայես լուաւ քաղաքապետն զգալն սուրբ հայրապետին եւ յարգելի իշխանցն և փառաւոր սիրելեացն եւ ընդյառաջ նոցայ բազում ընծաուք և պատրաստութեամբ զօրօք և հետևակօք, տարեալ եմուծ ի ըերթն Արզրումայ, որ էր փոքրիկ, զոր յետոյ հրամանաւ Փոքուն Թէոդոսի եղե, ‖ զի շինեցին և մեծացուցին։ 25բ Եւ արար սէր և ընդունելութիւն սուրբ հայրապետին և պարգևս բազումս ետ նմա, և նոյն ժամայն ելեալ անտի և եկն ի բարձբարլուրս մերձ քաղաքին, դէմ յարևելս կոյս, և խաչակնքեալ անտի զքաղաքն փրկական սուրբ նշանաւ,.որ ունէր ընդ ինքեան, օրհնեաց զքաղաքն և զամենայն սահմանս/նորին, զիշխանս և զամենայն բնակիչսն որ ի նոսա։ Եւ իջեալ անտի սուրբ հայրապետն հանդերձ իշխանօք և զօրօքն ամենայն, գնացեալ հասին ի Քերսոն քաղաք անուանեալն և ի գիւղն Հինձք, դէպ յարևելս կոյս ի բարձր տեղւոջ բանակեալ օթեցան, կամէր սուրբ հայրապետխ մերոյ գնալ յաթոռն Գրիգորաշէն, որ ասի Էջմիածին։ [Եւ] ի գիշերին, յորում օթեալ էր, ետես զարմանալի տեսիլ յայտնապէս, զի ամենամաքուր սուրբ Աստուածածինն ունելով ի գիրկս իւր զորդին միածին բազմութեամբ հրեշտակօք իջեալ և զգեցեալ էր ծիրանազգէստս կարմրափայլս և փայլակնացայտս հրեշտակք պարունակելով եղանակէին ասելով։ «Դու ես հարսն

---

1 БВГD անդ չիք, և շինէր չիք, եկեղեցիս, БВ կարգէր փխ. օծանէր։ 1—4 ГD կարգէր քահանայապետս և ձեռնադրէր եպիսկոպոսս և շինէր ի վերայ ճանապարհին և (D և չիք) հոգետունս փխ. օծանէր քահանայս......խաներս և հոգէտունս։ БВ և ձեռնադրէր եպիսկոպոսունս փխ. սարգաւագունս և դպիրս......քաղաքաց և վանորէից։ 4 ББ ճանապարհացն։ 5 Б Գերջանա, БВ մուա փխ. մօտ։ 6 БВГD նայես չիք, զգալն իշխանաց և սուրբ հայրապետին։ 7 БВГD եւ յարգելի չիք, և փառաւոր սիրելեացն չիք, D նոցա։ 8 БВГD ընծաուք և չիք, և զօրօք, և հետևակօք չիք։ 9 БВГD եմոյծ, Б Արզրումա, Г ետոյ։ 10 БВГD եղև զի չիք։ 12—13 БВГD եւ սուրբ հայրապետն (ГD սուրբ հայրապետն չիք) ի բարձրաւանդակ տեղին փխ. ելեալ անտի և եկն...... յարևելս կոյս։ 13—14 БВГD անտի զքաղաքն չիք։ 14 БВГD նշանաւն, Г ինքեանս։ 15 Б աւրհնեաց։ 15—16 БВГD և զերկիրն և (БВ և չիք) զիշխանն (D զիշխանս) և զբնակիչքն (ГD բնակիչքն) ամենայն փխ. և զամենայն սահմանս......որ ի նոսա։ 16 БВГD ելեալ փխ. իջեալ անտի, БВ սուրբ չիք։ 17 ГD իշխանօքն, և գնացեալ, В հասին չիք։ 18 БВГD ի Քերսոն քաղաք անուանեալն և չիք, Հնձուց, ГD արևելս։ 19 Б բարձրաւանդակ տեղին, ВГD բարձրաւանդակ տեղին և անդ բանակեալ նստան, Б նստան փխ. օթեցան։ 19—20 ВВГD զի դէմ եղեալ էր սուրբ հայրապետին գնալ յաթոռն իւր սուրբ Գրիգորաշէն որ ասի Էջմիածին փխ. կամէր սուրբ ......որ ասի Էջմիածին։ 21—25 БВГD յայնմիկ տեսիլ զարմանալի ետես սուրբն Ներսէս յայտնապէս որ սուրբ Աստուածածինն նստեալ դէմ յանդիման վիմին ծիրանազգեստ փայլակնացայտ (В փալայկնացայա) և հրեշտակք պարունակեալ ունէին զնա և եղանակէին (БВ եղանակելով) ասելով (БВ ասէին) փխ. յորում օթեալ էր...... եղանակէին ասելով։

անարատ հօրն երկնաւորի, դու մայր ստեղծողին մերոյ, որ մեք սարսեալ դողամք, դու ծրարեալ ունիս զնա ի քում սեննկի, նա որ երկինք և երկիր չէին բաւական տանիլ ‖ 28ա դու բարձեալ ունիս ի բազկի քում, որով և լի է երկինք և երկիր փառօք նորա հաճեցաւ ընդ քեզ իջանել ի վերայ վիմիս յայսմիկ»։ Եւ զայսոսիկ մինչ ետես և լուաւ պահեաց ի մտի։

Եւ ընդ լուսանալ առաւօտուն հրամայեաց զօրացն ամենից քարինս բերել և էարկ հիմն եկեղեցւոյ ի նոյն վիմին, յորում իջեալ էր ամենօրհնեալ սուրբ Աստուածածինն և տէրն մեր Յիսուս Քրիստոս մանկական կերպի[։] ի գիրկս մօրն և օծեաց զքարինս Դ (4) և կացեալ աւուրս ինչ ի շինումն սուրբ տաճարին, որ և հիմնարկեալ հասոյց աւարտ կամարակապ և գմբէթայարկ, կարմրափայլ քարամբք զԿաթուղիկէն, զարդարեաց ի նմանութիւն հանդերձ ի սուրբ կուսին, որ ի հեռուստ իբրև զշափիւղայ փայլէ[49]։ Զեռնադրեաց եպիսկոպոս և յանձնեաց իշխանի քաղաքին և նա ուրախութեամբ անձն էառ, զի զամենայն կատարեսցէ անպակաս զչինւած յայլ տեղեաց նորին։ Եւ ինքն գնացեալ եհաս ի տեղի իւր, ուր էր միտք սուրբ հայրապետիս։ Եւ իշխան քաղաքին հաստատեաց զամենայն և բազմացան ի նմա միաբանութիւնք։ Եւ էր գլխաւոր վանք, զոր Շնորհալին ի «Յիսուս որդի» դրգոջն երգէ, որ և Քեսրոն[50] քաղաք շինեալ, ի Կարմիր վանքն հուպ անուանեալ[51]։ Աստ է գերեզման Գրիգոր կաթողիկոսին[52] ‖ 28բ և Ապիրատ մականուանեալ սուրբ հայրապետին Հայոց ընդ նմին, մերձ առ շիրմի սորին կայ ամփոփեալ Յօհաննէս կաթողիկոս սուրբ հայրապետն մականուն Իմաստասէր վերաձայնեալն, տես ի կարգս կաթուղիկոսաց ի ժամագրքի անդ։ Նաև ի մէջ տաճարի սոյնոյ ի ներքս խորանի է ամփոփեալ զմարմին Վասլի, զոր Ելուզակ անուանէ Շնորհալին[53]։ Աստ են և մասունք սրբոց և մասն սրբոյ խաչափայտին Քրիստոսի։ Նաև մերձ առ սրբոյ հրաշալի ուխտիս է կիսոյ ժամաւ հեռի ձոր ինչ, որ կայ անդ հանդեալ տաճարք և մատրանք յանուն սրբոց և սիրելեացն Աստուծոյ և յատուկ ճգնութեան տեղի սրբոց Հռիփսիմեանց և

1—5 տողի փոխարեն БВГ անարատ հօրն երկնաւորի որ և մեք սարսեալ զողամք դու ծրարեալ ունիս ի քում սեննկի որ լի է երկինք և երկիր փառօք նորա փխ. անարատ հօրն......ի վերայ վիմիս յայսմիկ։ 1D դու մայր ստեղծողին մերոյ չիք, որ և մեք։ 2—5 D դու ծրարեալ ունիս......ի վերայ վիմիս յայսմիկ չիք։ 5—6 ГD և զայսոսիկ...... պահեաց ի մտի չիք։ 7 БВГ ամենայն, D ամենից չիք։ 8 БГD տեղին փխ. վիմին։ 8 11 БВГ զոր ետես նստեալ զսուրբ կոյսն ի վերայ վիմին և օծեաց քարինս Դ փխ. յորում իջեալ էր......օծեաց զքարինս Դ։ 10—11 D և օծեաց......աւուրս ինչ չիք։ 11—32 БВГ ձեռնադրեաց եպիսկոպոս և յանձնեաց (Г անձնեաց) իշխանի քաղաքին և նա ուրախութեամբ յանձն էառ և շինեալ կառոյց գմպէթայարկ և լայնանիստ խորան ի քարանց կարմրագունից որ ի հեռուստ իբրև զափիւղայ (Б շափիւղա) փայլէ յանուն սրբուհւոյ Աստուածածնին որ է մինչև ցայսօր հռչակաւոր և միաբանակեցաց տեղիք որ այժմ Կարմիր վանք կոչի և ունի ձորն անապատ կուսանաց և ճգնաւորաց և բարեհամ աղբիւր և վայելուչ վայրք որ Հռիփսիմեանք (Г Հռիփսիմեանց) փխ. ի շինումն սուրբ...... սրբոց Հռիփսիմեանց և, D որ է մինչև ցայսօր հռչակաւոր և միաբանակեցաց տեղիք որ այժմ Կարմիր վանք կոչի և ունի ձորն անապատ կանանց և ճգնաւորացն և բարեհամ աղբիւր և վայելուչ վայրք որ Հռիփսիմեանց փխ. ի շինումն սուրբ.....Հռիփսիմեանց և։

Գայիանանց, որք ի գալն ի Հռովմայ եկեալ կացին և մնացին անդ ժամանակս ոչ սակաւս ճգնելով և աղօթելով զանձինս ապրեցուցանել կամելով ի յաշխարհային զաղիր ցանկութենէ։ Եւ աստ է բարեհամ ցրտացեալ և սառն ջուր քաղցրահամ, որ և ասի Հռիփսիմէի աղբիւր, որ և է առողջարար ի զովացման և փարատումն ջերման և այլպէս պատահմանց, որք բազումք գնան յուխտ և երկրպագութիւն, ի գալն ի սուրբ ուխտս Կարմիր վանք և աստի անդ, որ և տէր պահեսցէ հաստատ մինչ ի կատարած։

|| Եւ միւս վանքն է ի կողմն հուսխսայ, որ անուն սրբոյ 27ա
Խաչին է շինեալ և կառուցեալ, զոր փոքր ի շատէ պատմեցից քեզ, և թէ զխաչափայտին զբովանդակ պատմութիւնն հարցանիցես, լիակատարն գրեալ կայ ի Կիրակոս պատմագիրն և այլ ուրեք, բայց մեր պիտանացուն այս է, թէ որպէս բերաւ յաշխարհս Հայոց և թէ վասն էր ասի խաչափայտ և Խաչկավանք։ Զի յորժամ թագա[ւ]որեաց բարեպաշտ և երկուղածն Աստուծոյ մեծ կայսրն Հերակլ ի Ստանպօլ, որ էր ազգաւ Հռոմ ի Թըւականիս մերոյ ԾԷ (608), ազդեցութեամբն Աստուծոյ ել ի խնդիր խաչափայտին Քրիստոսի բազում և անթիւ զօրօք գնալ ի Թարվէզ, զի յառաջագոյն գնացեալ էր պիղծն և ժանգն Խուռիան հրամանաւ Պարսից արքային Խոսրովու բազում զօրօք և եհաս Մսըր մինչի յԱղէքսանդրիայ և գերեալ քանդիաց և աւար էառ զերկիրն Արապստանայ և ի դառնալն յետս եմուտ ի սուրբ քաղաքն Յերուսաղէմ և բազում քրիստոնեայս արար սրախողող և զսրբութիւնքն զամենայն ընդ նմին և զխաչափայտն Քրիստոսի, որ ի Գողգոթայ կանգնեալ կայր վարեաց գերի || և քահանայք 27բ
բազում տարաւ ի Թարվէզ առ թագաւորն Խոսրով, որ էր կռապաշտ։ Իսկ թագաւորն Հերակլ ել ի Կոստանդնուպօլսէ և եկն էհաս Արզրում, որ էր ընդ ձեռամբ և իշխանութեամբ իւրով։ Եւ տեսեալ զպարիսպն խախտեալ և քայքայեալ էր, զոր չար և անիծիալն, ատելին Աստուծոյ և մարդկան Խոռիանն աւերեալ էր սակաւ ինչ. և հրամայեաց շինել և նորոգել զամենայն և նստաւ ինքն բոլոր տարի մի և խոր[հ]էր հանապազ ես վարանէր ի մտի իւրում և ագայր անմըխիթար, թէ որով հնարիւք կարիցէ զխաչափայտն ընդ ձեռամբ ձգել[E4]......։

Եւ ինքն անկեալ առաջի զօրացն ամենայն անցին ընդ 30ա
գաւառն Խնուս և իջին ի դաշտն Ալաշկերտու և կտրեալ զվերին կողմն Մասիսոյ և հասին Արտաւազ գաւառն, որ է Մակու և

---

1—8 БВГ կոչի փխ. Գայիանանց որք......մինչ ի կատարած, D կոչեցաւ որ է մինչև ցայսօր փխ. Գայիանանց որք......ի կատարած։ 9 БВГD միւս, հիւսխսոյ, յանուն, Г անուն չիք, БВГD սուրբ։ 10 Б շինեալ և չիք, Г ծանուցից փխ. պատմեցից։ 11 БВD խաչափայտին։ 12 D լիակատար։ 13—14 ВВГ աշխարհս։ 14 БВ և կամ Խաչկավանք, Г Խաչկայվանք։ 15 ВГ երկիւղածն։ 16—17 В Թվականիս, Г Թուականիս։ 19 Б զոր փխ. զի, Г առաջագոյն, БВГ Խոռիան։ 20—21 БВГ էհաս մինչ (Г մինչև) ի Մսըր և Աղէքսանդրիայ և գերեալ քանդեաց։ 22 БВГ մտաւ։ 23 ВГ սրախողող արար։ 25 ВБD գերի վարեաց։ 13—577 էջի 32 տողը D բայց մեր պիտանացուն......որդի թագաւորին կրճատված։ 27 В կ. Պօլիսէ։ 29 Б չարն։ 30 БВГ և անիծիալն ատելին Աստուծոյ և մարդկան չիք, ВГ Խոռիան։ 31 БВГ սակաւ ինչ չիք։ 32 БВГ տարի մի բոլոր, և փխ. եւ։ 33 A որով։ 34 БВ ընդ չիք։

գնացեալ Հարևզանդ գաւառ, որ է Խօյ և անդ բանակիալ նստան
մինչ ի գալ յետնոցն ամենայն զօրացն......։
‖ Եւ եկեալ եհաս ի գաւառն Հացունեաց, որ այժմ Զօրս 31բ
ասի, և անդ նիեալ Բուրեղ տիկինն Սունիաց բաղում ընծայիւք
ընդառաջ մեծ կայսերն...
Եւ նա առեալ հաւատով եդ ի հիմունս եկեղեցոյն և շի- 32ա
նեաց վանք վայելուչ, հոյակապ և գմբէթայարկ խայտախար քա-
րիւ. ի պահպանութիւնն երկրին Բասենու, որ ‖ կայ մինչև ցայսօր 32բ
գեօղս Բաշխենց վանք կոչեն։ Եւ անտի ելեալ որդիք Թադաւորին
առաջնորդութեամբ իշխանին ելին ի լիառնակողմն և մտին ի
թաւ մայրիս, որոյ անունն Ազատ կոչի և գընացեալ հասանի ի
դուղն Ծաղկի, յակունս Եփրատայ, որ է ի գլուխս դաշտին Կար-
նոյ և անտի ելեալ գնացին ի ձորամէջ, ի կո[ղ]մն հիւսիսոյ, և ի
բարձրաբերձ լեռնոջ միոյ յայնկոյս և տեսին տեղին այն խո-
տալի և վայելուչ վայր, յանդիման Կարնոյ բերդին և բանակե-
ցան անդ աւուրս ինչ, վասն Բ (2) պատճառի՝ ա. որ յոյժ եայ-
լայ էր, որ ապահով էր վայրն այն, բ. որ մօտ էր ի քաղաքն,
զի ճանապարհի պիտոյսն հոգասցեն... 33ա
Եւ ժողովին շրջակայք ամենայն գիւղք և դաւառք, մանա-
ւանդ ի քաղաքէն Արզրումայ բազմութիւնն՝ արանց և կանանց, ես
Տաճիկք անթիւք ես ի ռամկաց ի մեծի աւուրն, այսինքն ի Վար-
դավառին. և առնեն բազում մատաղ ի փառս Քրիստոսի և խա-
չին նորա։ Եւ յայնչափ պաղ է ջուրն, որ ի յակէն ոչ ոք կարէ
է(7)-ն քար հանել, և բնաւ ոչ երեին տեղիք բղխմանն, այլ կայ
հանդարտ. և այնքան յըստակ է, որ թէ Ա (1) ըստակ մէջն ձգես
պըղտոր կու երևի ըստակն։ Եւս յառաջնորդեն յառաջս ջրին Բ (2)
ջաղացք յառաջ կու հանէ և շուրջ ածէ, զի այս հրաշք մեծ [է]...։
Իսկ եպիսկոպոսն Յօհաննէս կեցեալ անդ ես շինեաց անդ 34ա
բազմածախ եկեղեցի հոյակապ և հռչակաւոր յանուն սուրբ խա-
չին, որ մինչև ցայսօր Խաչկավանք ասեն։ Նաև Ա (1) խորան
շինեաց ի դսի կողմն, անուն սուրբ Յարութեան, զի յարուց որդի
Թադաւորին........։

* * *

Եւ այսուհետև սկիզբն արասցուք և գետոցն. զի քաղաքս և 35ա
լերունքն բարձր են քան զամենայն երկիրս, իբրև զշատրվան
բղխեն զանազան ակունք ի Դ (4) կողմանց լերանցն և լինի
Դ (4) գետ մեծ, և ընթանայն ի Դ (4) կողմն աշխարհիս։ Առա-
ջինն է և գլուխն, որ ելանէ արևելից կողմանէ, որ Վրաստունայ
պօղօզ կոչեն, ի Ծաղկավէտ լեռնէն մասն Եփրադայ, զոր Աստու-
ածաշունչն գրէ անսըզալ՝ ի դրախտէն ելեալ սա, որ արևել[ց]
ելեալ և ուղիղ դէպի հարաւ ընթանայ, իսկ Մօսէս Խորենացին

33 БВ Չի այսուհետև, ГD և (այսուհետև) չիք։ 34 БВ լերունքսն, Г ի լերունքն, БЪ երկիր զի իբրև շատրվան, ГD զշատրուան։ 35 Г յակունք, D չորս, ГD լերանց։ 36 D չորս, БВГD մեծ չիք, D չորս, БВ աշխարհի։ 37 БВГD և չիք, գլուխ, БВ յարևելից։ 37—38 БВ Վրասաան պօղազ, ГD Վրաստան պօղազ կասեն։ 38 БВ Եփրաթթայ։ 39 БВГD անսղալ, БВ սայ, յարևելից։ 40 ГD և չիք, БВ դէպ, БВГD Մովսէս։

աւէ, թէ Բ (2) յակ է Եփրատ՝ մինն || [35ր] Կարնոյ ելանէ և միուսն Ալաշկերտոյ, բայց գնացեալ երկոքինն յիրար միանան և լինի Եփրատն մի գետ. նաև Թուլգուրանցին, որ զԱրարածոց գիրքն ոտք հաներ է տաղիւ, յիշատակէ ասելով, թէ Եփրատ ի Կարնոյ ելանէ, ի Ծաղկազարդ տեղին, ուր Ոսկիանքն[55] և զՍուքիասանքն մկրտեցին. և ի մկրտելն զմիմիանս փութացուցանէին, զի մկրտեալքն զՔրիստոս տեսանէին և ավէտիք տային միմիանց. անդ և խաչ կանկնեցին ի գլուխ Ավէտեաց ձորակին, որ կայ ի վերայ վիմին գրօշմած մինչև ցայսօր ի յակունս Ցեփրատա, որ ստուգիւ աստ են մկրաեալ, որ բազում անգամ ուխտարարք գան ի վերայ Համբարձման. մեք և Փիլիպպոս կաթողիկոսն գնացեալ բազում վարդապետօք և անդ բանակ եհար ի վերայ Ավետեաց խաչին[56] և արար պատարագ։ Եւ անտի ելանեն զանազան և բարեհամ ակունք և խառնին ընդ իրար, նաևս Խաչափայտի ջուրն [57] ես խառնի ընդ սա և գետանա և գնացեալ յառաջ Հնձուց վանիցն և լինի գետ մեծ։ Եւ ս է գերեզման սուրբ վարդապետին Գոծեռ յարուցի, և իջեալ ի մէջ դաշտին, դէմ [յ]ա[ն]դիման բերթին Կարնոյ, ճաշոյ մի գնացք և ծովանա հանդարտ գնացիւք. և լինի շամպ խոտ և եղէգ յոյժ և մորայ, որ է ցեղ, հաւուց և Թռչընոց տեղիք ապաստանից։ Եւ գնացեալ հասանէ ի գուղն Ծրագ և Ջերմուկ և դա ջուր Բլուրն և Օղրակուն, նաևս ջուր Ցրտաձորուն գան, միանան, խառնին և լինի գետ մեծ ի մէջ դաշտին անհուն և ձայն || [36ա] արձակեալ գնայ ի ձորն Ջինիսու։ Եւ ի հիւսիսային կողմանէ լերանցն փոքր գաւառէն Ովաճըղու, որ է ի մէջ մայրիացն, ելանեն բազում ակունք և լինի գետ սուր և ախօրան և մտանէ անհուն ձորն Ծիրանայ և Սառչամու և հասանէ ի գուղն Մասուր և խառնի ընդառաջ Գաղտառիճու կամրջին ընդ Եփրատայ։ Եւ մտանէ ի ձորն Շողէնու, և գնացեալ հասանէ ի Դերջան ի գուղն Բագառիջ և Կօղեր։ Եւ գայ ջուրն Լակզոյ, Խորգունեանցն և Կեղոյ և միանայ. և լինի Եփրատս ծով. և անտի ոլորտս տալով գնացեալ հասանէ Եզնկայ և կտրեալ ընդ

1 БВ ակ Г յակն, Եփրատս, D երկու ակն է Եփրատս, БВГ ի Կարնոյ, БВГD միւսն։ 2 ГD խառնին յիրար փխ. յիրար միանան։ 3 БВГD Եփրատ։ 4 ГD հանել, БВ թէ չիք։ 4—5 БВ բայց այս որ ի Կարնոյ ելանէ փխ. ի Կարնոյ ելանէ։ 5 A ելանէ չիք, БВГD Ոսկեանքն։ 6 Б մկտրելն, БВГD զմիմեանս, 7 Б մկտրեալքն, БВГD միմեանց։ 8 БВГD կանգնեցին Աւետեաց ի գլուխ ձորակին։ 9 БВ վերայ չիք, Б Եփրատթա։ 10 Б մկտրեալ, ГD ուխտաւորք փխ. ուխտարարք։ 10—11 БВГD գան ի վերայ Համբարձման չիք։ 11 ГD և մեք։ 14 Г յակունք, ГD յիրար, БВ իրեար։ 14—15 БВ նաևս Խաչափայտի ջուրն ես խառնի ընդ սա չիք։ 15 ВГD գետանայ, БВ յառաջս, Г առաջ, D առաջի։ 16—17 БВГD ես է գերեզման......Գոծեռ յարուցի չիք։ 18 ВГD ծովանայ։ 20 БВГD Թռչնոց տեղի ապաստան։ 21 БВГD գիւղն։ 21—22 ББ Ցրտաձորոյն և Բլրոյն խառնի փխ. Բլուրն և Օղրակուն......միանան խառնին, ГD և գայ ջուր Ցրտաձորոյն և Բլրոյն խառնի փխ. և դա ջուր......միանան խառնին։ 23 Б գնա, БВ Ճինիսու, Г Ճինիգու, D Ճինիշու։ 24 БВ հիւսիսոյ, լերանց, Б Օվաճուխա, В Օվաճուխայ, ГD Ովաճուղու։ 25 БВГD մայրեացն, Г յակունք։ 26 Б Ծիրանա։ 27 БВГD գիւղն։ 27—28 БВ ընդառաջ Գաղտառիճու կամրջին չիք, ГD յառաջ։ 28 ГD կարմնջին, Б Եփրատա, БВ Շողայենու, ГD Շողենու։ 29 БВГD գիւղն, БВ Կօթեր և Բագառիճ, Б դա։ 30 БВГ Խորգունեացն, D Խորձունեացն, Б միանա։ 31 Б Երզընկայ, Б Երզնկայ։

մէջ դաշտին և ի Դ (4) կողմանցն բաղում Ջուրք խառնին ընդ նմա։ Եւ գնացեալ հասանէ ի բերթն Կամախ և մտեալ ի Քարաձորն Ցակնայ և Արապկերու և անտի հասանէ ի գաւառն Զմշկայ ի գլուխն Մալաթիոյ։ Եւ միւս ակն, որ ելանէ ի Դիատին բերթէն ի գլուխ դաշտին Ալաշկերտու, բաղում ակունք բ[ղ]խեն յորդառատ և խառնին ընդ իրար և գետան[ա]ն և գնացեալ ի մէջ դաշտին խառնին ջուրք բաղում և լինի գետ մեծ, որոյ անունն Մուրատ ձայնեն։ Եւ անտի գնացեալ հասանէ ի դաշտն Մանազկերտու և ընդ ստորոտովն Խնուսու և մտանեն բաղում գետք և գնացեալ հասանէ ի դաշտն Տարօնոյ յառաջս վանից սրբոյ Կարապետին և մտեալ ի ձորամէջս յառաջս ամուր բերթին Ողկանայ, ուր սուրբ Գրիգոր Լուսաւորիչն ամրանայր, և ոլորտս անցանէ ընդ գաւառն Ճապաղջրոյ. և հասեալ ի. բերթն Բալու և լինի Մուրատս անտանելի գետ. և շրջեալ իջանէ գներքին կողմամբն ‖ դաշտին Խարբերթու և գնացեալ հասանէ և սա 36բ ի գլուխն Մալաթիոյ, և միանան ընդ իրար Բ (2) ակունքս և լինի Եփրատս մեծ ծով, որ արապի բառով Ֆրատ ասեն գետոյս։ Եւ գնացեալ մտանէ ի ձորն Ապտէհերու և հասեալ ի բերդն հայրապետին մերոյ Ներսէսի, որ Կըլայ ոըջորջի, և շրջապատեալ զբերթն և գընացեալ հասանէ ի Բորաճուկ, որ Նաւք գնան ի վերայ նորա. և այնուհետև անկանի ի մէջ դաշտին և հանդարտ գնացիւք բաղում չօլս և անապատս անցանէ, զի որչափ վայրի Քուրթ և Արապի գուղք և շինուածքն կան առ ի եզերբն գետոյս են բնակեալք, որ ամենեւին ձիւն չեն տեսանել։ Եւ գնացեալ հասանէ յանդիման Պաղտատայ ի բերթն Ղուռնայ ի սահմանս Հիլլաու. և անտի խաղացեալ Ե (5) աւուրբ յառաջք և գայ Դիկլատ գետն Բաբիլօնի, որ է Շատն, զոր Աստուածաշունչ դրոց Տիգրիս կոչի, և խառնի ընդ Եփրատս և միա[ւ]որեալ գնան ի Բասրայ քաղաքն և մտանէ ի ծովն Հնդկաց, որ է Սպիտակ, զի իմաստասէրն Արիստոտէլ սորայ Օվկիանոս ասէ[58], զի Սպիտակ ծովս է շրջապատեալ ի Դ (4) կողմն աշխարհիս։ Զի Դ (4) գետք ի դրախտէն ելանեն՝ երկուքն սոքայ են՝ Տիքրիս և Եփրատէս, որ Հայոց երկրէն ելանեն և գնացեալ ընդ իրար միանան, զի բուն

---

1 D դաշտըն, БВГD և չիք, D չորս։ 2—3 ГD ի (Քարաձորն) չիք։ 3 ВD Ակնայ, Б Ակնա, Б Զմըշկոյ, В Զմշկոյ։ 4 БВГD միւս։ 5 Г յակունք, D բ[ղ]խեն չիք։ 6 БВ իրեար, ГD յիրար։ 7 ГD բաղումք։ 8 ГD անունն։ 9 БВ Մալազկերաու։ 10 БВ առաջս, ГD առաջս (D առաջոյ) վանիցն։ 11 ГD առաջս։ 12 ГD սուրբն, Б Ողականա։ 13 ББ ոլորտս տալով անցանէ։ 15 ГD Խարբերթու դաշտին։ 16 ГD Մալաթոյ, БВ իրեար երկու, Г յիրար, յակունքս, D յիրար երկու յակունքս։ 17 БВ Ֆրեատ։ 18 ББ բերթ։ 19 БВD յոըջոըջի, Г յոըջյոըջի։ 20 БВГD և (գընացեալ) չիք, БВ Բէրիաճուկն։ 21 БВГD նորա չիք, БВ և (հանդարտ) չիք։ 22 БВГD գնացիւք։ 23 БВГD գիւղք, ББ շինվածք, ГD շինուածք, ББГD ի (եզերբն) չիք։ 24 БВ բնակեալ։ 25 БВ դէմ յանդիման, Б Պաղտատա, БВ Ղուռնայ ի սահմանս չիք, D Ջուռնայ։ 26 Б Հիլլա, В Հիլլայ, ГD Հիլլայու, ББ Ը և կամ Ժ աւուրբք փխ. Ե աւուրբ, ВГD յառաջ, Б գա։ 27 В Բաբելովնի, Г Բաբիլոն, ГD Աստուածաշունչն, գետոյս փխ. դրոց։ 28 Б ասի փխ. կոչի, В կոչի չիք, ГD կոչէ, В Եփրաթիս, ГD խառնին ընդ յիրար Եփրատս և Տիգրիս։ 29 БВ մտանեն ի ծովն։ 30 Б սորա, БВГD Ովկիանոս։ 31 БВ պատեալ փխ. շրջապատեալ։ 32 Б Բ-քն, ГD երկուք, БD սոքա։ 33 Б յերկրէս, БВ իրեար։

երկիրն Ասորոց ի մէջ երկուց գետոյս են ընակեալ իբրև կղզի,
վասն այնորիկ գիրք ամենայն Միջագետաց Ասորոց ասեն։ Զի
Տիգրիս Հաշտէն գաւառէն ելանէ և գնացեալ ի Ցամիթ և ի Մու-
սուլ, ի Պաղտատ և խառնին ընդ Եփրատին, որպէս ի վերոյ
գրեցաք. և Քրիստոս փառք յաւիտեանս. ամէն։
Այսուհետև վերջ արասցուք ‖ Եփրատին և սկիզըն արաս- 37ա
ցուք միուս գետոցն, որ բղխեալ ելանեն ի հարաւային կողմանց
ի բարձրաբերձ լերանց ի Բինգօլէ, որ է Ռ-ականց և սկիզբն ի
Շուշարա և խառնեալ ընդ իրար գետանայ և գայ մտանէ ի ձորն
Թէքմանու և լինի Արազ։ Եւ սկսանի գնալ ուղիղ դէպի յարևելս
և հասեալ ի դաշտն Բասենու գնացեալ ի կամուրջն Զօպանի[59]
եւ գայ Վերին Բասենու Մուրց գետն, եւ ջուրն Քուռնիճու, եւ
Թիմարու, նա եւ Պտիճվանու ջուրքն եւ գան և խառնին ընդ մէջ
կամրջին, եւ գայ ջուրն այն Աւնիկի և միանա առաջն Եայղանու
և լինի Արազս գետ մեծ և անհուն։ Եւ գնացեալ մտանէ ի Վի-
շապաձորն Կաղզվանայ և հասեալ Աղճաղալան և գետն գայ Ղար-
սայ և Անոյ, որ է Ախօրան եւ խառնի ընդ Արազն և ոլորտս
տալով, գնացեալ հասանէ երկիրն Երէվանայ և Դվնայ ընդ ստո-
րոտովն Մեծին Մասիսոյ. և գան ջուրքն Արարատեան գաւա-
ռացն և խառնին ընդ Արազն. նայ եւ ծօվանայ, և կտրեալ զներ-
քին կողմն Արարատեան դաշտն եւ գնացեալ հասանէ ի գուղայ-
քաղաքն Աստապատ և Ջուղայ, որ նտվորդք գնան ի վերայ նո-
րայ. և անտի մտեալ ի խորաձորս բազում աւուրբք եւ խառնին
ջուրք բազում. և գնացեալ հասանէ երկիրըն Շրվանայ և Դար-
պանդա[յ]ն, որ է Շամախի և միանայ ընդ Կուր գետին և մտանէ
ի ծօվն Կասբիական, որ է Կիլան։
Եւ միուս գետն Ճորոխ ելանէ ի հիւսիսոյ լերանց քաղա-
քիս ի Թաւ մայրիաց միջոյ ի գաւառէն Զորմայրոյ և գիմեալ
գայ ուղիղ դէպ հուսիս ‖ ելանեն ակունք բազում և զանազան և 37բ
յառաջացեալ խառնին ընդ յիրար և գետանայն և իջանէ ի մէջ

---

1 D գետոցս, Г բնացեալ փխ. բնակեալ, БВГD իբր։ ~ Б Միջայգետաց, БВ ասէ։ 3 БВГD ի Ցամիթ և չիք։ 4 БВD և ի Պաղտատ (Б Բաղտատ), БВГD խառնի։ 5 БВ և Քրիստոս փառք յաւիտեանս ամէն չիք։ 7 БВГD միւս, BD հարաւային։ 8 БВ ի (բարձրաբերձ) չիք, Г որ է չիք, БВГD հազարականաց փխ. Ռ-ականց, և (սկիզբն) չիք։ 9 В Շուշարայ, ГD Սուզալարայ փխ. Շուշարա, БВ իրեար, Б զա։ 10 БВ դէպ ուղիղ, ГD արևելս։ 11 БВ Բասենոյ, БВГD Զօպանի կամուրջն (D կամուրջն)։ 12 БВГD և գայ (Б գա), БВ Բասենոյ, БВГD Մուրց չիք, ջուրն փխ. գետն։ 12—13 БВГD եւ ջուրն Քուռնիճու եւ......եւ գան և խառնին չիք։ 13—14 ГD խառնի ի մէջ կամրճին։ 14 БВ կտրմճին, БВГD եւ գայ ջուրն այն Աւնիկի և միանա առաջն Եայղանու չիք։ 16—17 Б ու Ղարսա։ 17 БВГD Ցանոյ, БГD և փխ. եւ, ГD Արազս։ 18 Б Երևանա, Դվնա։ 18—19 ГD և ընդ ստորոտովն։ 19 БВГD ջուրք Այրարատեան։ 20 БГ նայ չիք, БВГD և փխ. եւ, Б ծովանա։ 21 Б Այրարատեան դաշտին, ВГD Այրարատեան դաշտ և գնացեալ (Б զընացեալ)։ 21—22 БВГD գիւղաքաղաքն։ 22 Б Ջուղա։ 22—23 БГD նորայ չիք։ 23 БВ եւ չիք, ГD և փխ. եւ։ 24 ГD բազումք, БВГD երկիրն (Б յերկիրն) Շրվանայ (Б Շրվանա)։ 24—25 БВГD ի Դարպանան։ 26 Г ծով, ГD Կիլանն։ 27 БВГD միւս, В ի (հիւսիսոյ) չիք, БВ հիւսիսային։ 28 ВГD մայրեաց, Б մայրոց, БВГD Զորմարոյ։ 29 БВ գնայ փխ. գայ, БВD հիւսիս, Г ի հիւսիս, ГD բազումք։ 30 БВ իրեար, БВГD գետանան, մէջ չիք։

ձորուն Մաստատու և գնացեալ հասանէ ի քաղաքն Բաբերթ և ճեղքեալ Բ (2) բաժանէ զշինուածքն. և շրջեալ զբերթն անցանէ ընդ մէջ դաշտին. և գան ջուրք ի չորից կողմանց խառնին ընդ սա, և լինի Ճորոխս մեծ և անհունս. և մտեալ ի խոր ձորս Ըսպերու և հասանէ ընդյառաջ սուրբ Յօհաննէսին վանիցն, որ կայ անդ անփոփեալ զճրկոյթ սրբոյն Յօհաննու Կարապետին, ես կան ի միջի նորայ կարգա[ւ]որ և միաբան բազմութեան մինչև ցայսօր սաղմոսերգութիւն պաշտօն, ժամ, և պատարագ անխափան։ Եւ անտի յառաջ խաղացեալ հասանէ ի բերթն Ըսպեր և Ագրաք ես գնացեալ աւուրս բազումս ի մէջ անհուն և անտանելի ձորոյն, հասանէ ի քաղաքն Վրաց և ի Արթվին լի և անթիւ ձիթապտղով. և ի մէջ ձորուն, առ ափն գետոյս Բ (2) կողմ, բովանդակ գիւղք և աւանք, այգիք ես ծառոց պտուղք զանազան և ախորժք, բազում յոյժ մինչև ի յեզր ծովուն անպատմելի և անթվելի։ Եւ գետք յոլովք գան ի Թորթումու, Իշխանու, Օղթիացն ես Փանակու և միանան ընդ Ճորոխիս և հասեալ ի բերթն Գօնիայ առ ափն Սև ծովին և մտանէ ի նա։

Եւ միւս գետն յառաջացեալ յարևմտից լերանց յերկաքս և դիմեալ գնայ ուղիղ արևմուտս կոյս, որ Գայլ գետ ասեն սորա, զի ի գաւառէն Գա[յ]լ գետոյն ելանեն անթիւ ակունք. ի դեղջէն Կարմրոյ լերանցն ժողո[ւ]վեալ մտանեն ընդ ձորն և լինին գետ սուր և զարհուրելի, և գնացեալ հասանէ ի Մուրատ ղալասիս և անտի Նիկիոար քաղաքն, զի անդ էր ‖ սուրբ հայրապետն Գրի- 8ա
գոր Նիւսացին։ Եւ ջուրք բազում մտանեն ընդ սա և մտեալ ընդ խորաձորս և անցանէ ընդ բազում գաւառս Հոռոմոց և հասեալ ի Սև ծովն և մտանէ անդ։ Զի իշխանն Վարդ Պատրիկ ի վերայ գետոյս այս խոյս տուեալ և կամուրճն ետ ընկենուլ ի գետն և ինքն էանց. և զօրքն Հոռոմոց փախստական դիմեալ ի կամուրճն ոչ գտին. և Տաճկացն զհետմտեալ զորն կոտորեցին և զորն դիաթաւալ արարին և զորն սրոյ ճարակ արարին և կէսք ջրասոյզ արարին Ռ (1000)-ս և Ճ (100)-ս։ Ոչ թէ Վարդ Պատրիկն ի զուր արար, զի յառաջմէ չարաճըճիկ ազգն Հոռոմոց բազում

---

1 БВГ ձորն, D ձորն Մաստարու։ 2 БВD յերկուս, D յԲ, ВГD զշինուածքս։ 3 БВ ի կողմանց չորից, ГD և խառնին։ 4 БВГD անհուն, БВ ի ձորն խոր, ГD ի ձորս խոր։ 5-9 БВ ընդյառաջ սուրբ......ի բերթն Ըսպեր և չիք։ 5 ГD առաջ։ 6 Г Յովանէսու, D Յովհաննէսու։ 6—9 ГD ես կան ի միջի......պատարագ անխափան չիք։ 9 ГD առաջ, Ըսպերու։ 10 БВ Ագրակ և, բազում աւուրս, ГD Ագրակ և գնացեալ ի բազում աւուրս, D անհուն և չիք։ 11 БВГD և ի չիք։ 11—12 БВГD զոր ձիթապտուղ լի և անթիւ լինի։ 12 БВ ձորոյս, ГD ձորոյն, D երկու։ 13 БВГD գիւղք, և փխ. ես, БВ պտուղ։ 13—14 БВГD զանազան և ախորժք բազում յոյժ չիք։ 14 ГD մինչ, БВГD ի չիք։ 15 Б գետ, В ի (Թորթումու) չիք։ 15 БВГD Թորթումու Իշխանայ (Б Իշխանա)։ 15—16 БВГD Յօխտեացն և։ 17 D Գօնեայ, ГD յափն, БВГD անդ փխ. ի նա։ 18 БВГD միւս, БГD երկրէս փխ. յերկաքս։ 19 Б գնա, БВ յարևմուտս, ГD արևմտից։ 20 АБГD գաւառէն չիք, БВГD գետու, Б և ի զեղչէն։ 22 БВГD ղալասին։ 23 D Նիկեսար, БВГD անտի։ 24 ГD բազումք, В սայ։ 27 БВГD ընկենուլ։ 28 БВ և կամուրճ։ 29—30 БВГD և զորն դիաթաւալ......սրոյ ճարակ արարին չիք։ 30 А զօրն։ 30—31 ББ ջրասուզ։ 31 Г Ճ-ս և բիւրս, D հազարս և բիւրս, Б Վարդն Պատրիկ, В Պատրիկ։ 32 ГD առաջմանէ, ГD չարաճըճիկ էին ազգն Հոռոմոց։

Նեղութիւնս հասուցին ազգիս Հայոց, ևս իշխանքն մեր վիրաւորեալ էին ի ձեռս նոցայ և ի դիպօղ ժամու հայէին, որպէս աստ դոյն գործեալ զչարին և հատուցին զչարն, Աստուած կայ, վասն այն պատճառին Հոռոմքն շուն էրմանի ասեն ազգին մերոյ, բայց արարմունքն երկոցունցն ոչ էր հաճելի Աստուծոյ։

Ապա ներողութեամբն Աստուծոյ թագաւորեաց Մահմէտն և եհան զակն գոռոզից և անբարտաւանից՝ Հոռոմոց և քրիստոնէից, զոր տէր Աստուած փրկեալ ազատեսցէ զձեզ ի ձեռանէ սոցայ։ Այսքանս վասն գետոցն, որ ելանեն ի լերանցն Արղրումայ և որպէսզի ճանապարհաւ և որքան աւուրբք մտանեն ընդ ծովերն որիշ որիշ պատմեցից քեզ կարգաւ, իմաստուն եղբայր։ Բայց քայն զԵփրատն երկար ճանապարհ ոչ ոք ունի, որն Ի (20), որն Լ (30), որն Խ (40) աւուրք մտանեն ի ծովն, բայց Եփրատն Գ (3) ամսէն ճանապարհաւն, ապա թէ ի ծովն մտանէ։ Բայց դիտեմ, զի պատմութիւնս պարսաւելի է իմաստնոցն, ‖ 38բ. բայց խընդրեմ ազատ առնել զմեզ ի բամբասանաց և կամ զթերին լընուլ, քանզի յոյժ խնդրեաց հարազատ եղբայրն իմ Մաղաքեայ և քահանայքն և սարկաւագունքն մեր յոյժ թախանձեցին և ես զխնդիրս նոցա կատարեցի բարէխօսութեամբ սուրբ կուսին Տալիթայ և Ամլորդւոյն նաև լուսաւորին մերոյ և ամենից սրբոցն։ ամէն։

---

1 БВ նեղութիւն, БВГD ե փխ. ևս, D իշխանին, БВГD մեր չիք։ 2 D նոցա։ 3 A զոյն, Г գործեալ հատուցին չար, БВD զչարին և չիք, չար, БВГD Աստուած կայ չիք։ 4 БВГD նորա համար փխ. վասն այն պատճառին, БВ Հոռոմք, էրման։ 4—5 БВГD ազգին մերոյ չիք։ 5 БВГD արարմունք, ББ երկուցն։ 7 БВГD գոռոզից և անբարտաւանից Հոռոմոց և չիք։ 8 БВГD զմեզ փխ. զձեզ, БГD սոցա։ 9 ГD այսքան, БВГD Արզրումայ (Б Արզըրում) լերանցն։ 10 D որպիսի, Б աւուրք։ 11 ББ պատմեցի։ 12 БВГD քան, Г զԵեփրատն, В զԵփրաթն, БВ յերկար, БВ (Ի) որն չիք։ 13 БВ և կամ փխ. որն (Խ), Г կամ Լ կամ Խ, D քսան կամ երեսուն կամ քառասուն, БВГD աւուրբք, Г երեք։ 14 БВГD ճանապարհաւ, БВ թէ չիք, БВ ի ծով, ГD մտանէ ի ծովն։ 15 БВ իմաստնոց պարսաւելի է, ГD իմաստնոց, АБВ բայց չիք։ 17 Б Մաղաքիա, ВГD Մաղաքիայ։ 18 ГD սարկաւագունքն։ 20 БВГD Ամլորդոյն, ամենայն փխ. ամենից։

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այս ամբողջ հատվածի սկզբի մասը Մ. Խորենացու Պատմության III գրքի ԾԹ գլուխն է, մասամբ աղավաղված, որը բերված է այստեղ որպես ներածություն, մինչդեռ բացակայում է Կ. Կոստանյանցի հրատարակության բնագրից։

2. Պատմական Հայաստանի 15 «աշխարհներից» մեկը։ Ա. Շիրակացու անունով հայտնի Աշխարհացույցը այն կոչում է «Բարձր Հայք, այսինքն Կարնոյ կողմն» (պրոֆ. Աշ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան 1944 թ., էջ 348)։

3. Նույն Աշխարհացույցի հեղինակը Բարձր Հայքի դիրքի մասին գրում է. «Եւ ըստ անուանդ, արդարև բարձր քան զամենայն երկիր, քանզի ի չորս կողմանս արձակ է» (Նույն տեղում, էջ 349)։ Աշխարհացույցի համաձայն Բարձր Հայքը ունեցել է ինը գավառ (Նույն տեղում, էջ 349), սակայն, XVII դարում Օսմանյան Թուրքիայի վարչական բաժանման համաձայն Կարինի (Էրզրում) կուսակալության մեջ մտնում էին Բարձր Հայքը և Տուրուբերան, Այրարատ, Տայք նահանգների մասերը, որոնցից կազմված էր, ըստ Հակոբ Կարնեցու, 23 գավառ։

4. Հեղինակն ուրիշ անգամ էլ է հիշում առանձին գավառների աղով հարուստ լինելու մասին։ Այդ փաստը, ի դեպ՝ հիշատակում է նաև Աշխարհացույցի հեղինակը (էջ 349)։

5. Նկատի ունի Ագաթանգեղոսի պատմությունը։

6. Խոսքը վերաբերում է «Արևելք գերարփի» բառերով սկսվող շարականին, որը ոմանք վերագրում են Կիրակոս Թարգմանչին (XII դ.) Գրիգոր Վկայասերի աշակերտին, ուրիշները՝ Կիրակոս Երզնկացուն (XIII դ.)։

7. Այս անձնավորությունների մասին հեղինակը հիշում է նաև իր ժամանակագրության մեջ (տես ՄԺ, 1, էջ 241)։

8. Գայլ գետի անունով գավառը, որն ընկած էր Երզնկայից հյուսիս, XVII դ. գտնվում էր Կարինի կուսակալության մեջ։ Գավառի կենտրոնը հանդիսանում էր Կյալկութ-Չիֆթլիկը, Գայլ գետի վրա։ Տես վերևում, էջ 213, ծանոթ. 2։

9. Այժմ գյուղ, Երզնկայի մոտերքում, կոչվել է նաև Կարմրէ։

10. Այս գավառը Բարձր Հայքի պատմական Առյուծ գավառի մի մասն է կազմել և ընկած էր Գարանաղից արևմուտք։

11. ABDI տարբերակներում «և ունի վանք ղվս երկու» ձևով, «ղվս»-ի վրա պատիվ չկա. իմաստավորել չկարողանալու պատճառով հրատարակությունից դուրս գցեցինք։ Սակայն, այստեղ, ենթադրաբար նշում ենք՝ «գովելիս» իմաստը։

12. Վրացիները կոչում են Խախուլ, որն ընկած է Թորթում լճի մեջ թափվող համանուն գետակի եզրին, լճի հարավ-արևմտյան ծայրում գտնվող Օշք (նաև Էոշք) գյուղից հարավ-արևմուտք։ Մատենադարանի № 3223 ձեռագրի 1458 թ. հիշատակարանում Ավետիք գրիչն այն համարում է նաև գավառ «Գրեցաւ... ի գաւառիս Խախուա և Թորթոմայ, ի վանս, որ կոչի Ազըրկի» (էջ 326բ)։

13. Տես ծանոթ. 12։

14. Այս գյուղն ընկած է Օլթի գետի ստորին հոսանքում, գետի աջ ափին։

15. Կոչվել է նաև Նառիման, գտնվում է Թորթումից արևելք։

16. Իմա, Օլթի։ Մ. Ուռհայեցու մոտ հանդիպում ենք Հակոբ Կարնեցու նշված ձևով (էջ 425)։

17. Գտնվում է Վերին Բասենում, կոչվում է նաև Ջիվան-Կալե։

18. Բավական մեծ գյուղ Օլթիից արևելք, գտնվում է Օլթի գետի մեջ թափվող Գարտեղ-չայի ձախ վտակներից մեկի վրա։

19. Հունարեն «προβατικος» բառից։ Ունի միայն հովհան ավետարանիչը. «Եւ էր յԵրուսաղէմ ի պրոբատիկէ աւազանին՝ որ կոչէր եբրայեցերէն բեթհեզդա. հինգ սրահ. յորս անկեալ դնէր բազմութիւն յոյժ հիւանդաց, կուրաց կաղաց գօսացելոց, որ ակն ունէին ջրոցն յուզելոյ» (Ե. 2—3)։

20. Գյուղ, կոչվել է նաև Խամլրերդ. գտնվում է Խնուս գավառում համանուն լեռան վրա, որը հանդիսանում է Բինգյոլի արևելյան ուղղության բազուկներից մեկը։

21. Այն գյուղը, ուր, մեր պատմիչների համաձայն, մահացել է Սահակ Պարթևը. «...վախճանեցաւ խաղաղական հանգստիւ ի դաւառին Բագրեւանդայ, ի գիւղն որ անուանեալ կոչի Բլուր...» (Ղ. Փարպեցի, Պատմութիւն Հայոց, աշխ. Գ. Տեր-Մկրտչյան և Ստ. Մալխասյանց, Տփխիս, 1904, էջ 37 (հմմա. Մ. Խորենացի, III, կէ և ուրիշներ)։

22. Մանազկերտի ժողովն իրականում տեղի է ունեցել 726 թ. տես վերևում, էջ 36, ծանոթ. 34)։

23. Այս գավառն ընկնում է Բինգյոլից հարավ-արևելք։

24. Ճապաղջրի մոտերքում։

25. Պատմական Մանանաղ գավառը, Կարինից հարավ։

26. «Կերւացս և «կերուացք» բառերի տակ հեղինակը հասկանում է վարչական առանձին միավորի, տվյալ դեպքում կուսակալության, փաշայի իշխանության անսահման իրավունքները։ Նշանակում է փաշային հանձնված կուսակալության մեջ մտնող բնակչությունը վճարելու էր ոչ միայն կայսերական զանազան հարկերը, այլև փաշայի, նրա պաշտոնյաների, զորքի և մյուսների ապրուստի ծախսերը, ինչպես նաև հարկերը։

27. Հակոբ Կարնեցին իր ժամանակագրության մեջ ևս նշում է, որ Կանդիայի պատերազմը տևել է 30 տարի (ՄԺ, 1, էջ 242), ուրիշներն էլ նշում են այդպես (նույն տեղում, էջ 326)։ Սակայն դա սխալ է։ Այդ պատերազմն սկսվեց 1645 թվին և տևեց մինչև 1669 թիվը, շուրջ 25 տարի։ «Շինուած Կարնոյ քաղաքի» աշխատության գրելու ժամանակ, ինչպես նշում է հեղինակը, այդ պատերազմը շարունակվում էր. «այս Լ (30) ամ է, որ գեռ ևս պատերազմի է (խոսքը օսմանյան Թուրքիայի մասին է—Վ. Հ.) ընդ Թուէին Վանատիկոյ. և ցանայ զմեծ բերդն, որ ի Կրիտէս է, կամի առնուլ» (էջ 561)։ Այս խոսքերը վերաբերում են Կրետե կղզու գլխավոր քաղաք Կանդիային, որը Թուրք զորքերից պաշարվել էր 1648 թ. և միայն 1669 թ. սեպտեմբերին նվաճվեց։ Հետևապես այս աշխատությունը ավարտվել է մինչև 1669 թ.։ Նկատի ունենալով ինչպես այս, այնպես էլ Б և В տարբերակներում պահված հետևյալ հիշատակարանը, որը գտնվում է «Շինուած Կարնոյ քաղաքի» աշխատության բուն նյութի մեջ. «Գրեցաւ պատմութիւնս ի քաղաքս Արզրում ձեռամբ բազմամեղ Յակոբս ի թվականիս մերոյ ՌՃԺԷ (1668)» (Б, էջ 44ա, նույնը տես В, էջ 126ա), կարող ենք հաստատ պնդել, որ այս հիշատակարանի մեջ հիշված «բազմամեղ Յակոբ»-ը նույն ինքը Հակոբ Կարնեցին է և աշխատութիւնն էլ գրվել է ու ավարտվել 1668 թ.։

28. Իմա, Կիպրոս։

29. Իմա, Դանուբ գետը։

30. Զաֆրան բույսի տեսակ (արաբ. Záferan պահլ. և պրսկ. kurkum), կոչվում է նաև քրքում։ Այս բույսի մասին մեջ ենք բերում պրոֆ. Ստ. Մալխասյանցի բացատրությունը.

«Թրատերևների կարգին պատկանող...բույս...մուգ կանաչ գույնով, մեջտեղից սպիտակ ցցով, մանուշակագույն անուշահոտ ծաղիկներով, որ գործ է ածվում իբրև համեմունք և իբրև ներկատու նյութ (դեղին գույնի)։ Ծագում է Արևելքից, բայց տարածված է ամեն տեղ» («Հայերէն բացատրական բառարան» հտ. IV, էջ 596)։

31. Կոչվել է նաև Մոքքա, քաղաք Արաբիայում՝ Եմենում, Բաբ-էլ-Մանդեպ նեղուցից մի փոքր հեռու։

32. Իմա, Իմերեթիա։

33. Ճիշտ ձեր Շահրազուր, քաղաք Հյուսիսային Միջագետքում։

34. Օսմանյան կայսրության ծանր հարկապահանջության մասին Հակոբ Կարնեցին ինքնագիր հիշատակարանում ահա թե ինչ է գրում. «Ով եղբայրք, յորժամ հանդիպիք ի յայս թղթիս մի մեղայգրեք գրիս, զի Տաճիկք խիստ կու նեղացընին հարկապահանջութեան և խիստ տրտմեալ էի և իբր դերադի գրեցի» (№ 6485, էջ 175բ և 176ա), իսկ Սամուել

գրիչը այդ մասին իր հիշատակարանում հետևյալ սակավ տողերն է թողել. «որ անբաժանելի կողոպտեն զմեզ, որպէս աւաղակ ի լեռնի» (№ 4649, էջ 302ա)։

35. Ժամանակի չափ, որով կարելի է որոշել նաև տարածության մեծությունը։ Հեղինակը նման հասկացություն ուրիշ անգամ էլ է գործածել։ Տվյալ դեպքում ուզում է ասել Կարինի բերդի շրջագիծն այնքան է, որքան տարածություն կարելի կլինի անցնել 2—3 կանոն սաղմոս ասելու ժամանակամիջոցում։ Չափի նման հասկացությունը, որը, սովորաբար, եկեղեցականներն են գործածում, հանդիպում ենք նաև Անդրեաս Եվդոկեցու մոտ, որպես ժամանակի չափ (տես ՄԺ, 1, էջ 157)։

36. Նահատակներ, որոնք սպանվել են Կարինում 808 թ. հոկտեմբերի 19-ին (տես ՄԺ, 1, էջ 28, ծանոթ. 10)։

37. Գյուղ և գավառ Այրարատի պատմական Բագրևանդում (Ալիշան «Այրարատ», էջ 521—522)։

38. Գյուղ և գավառ պատմական Ապահունիքում։

39. Տես նաև հեղինակի ժամանակագրությունը, ՄԺ, 1, էջ 242։

40. Այս մասին տես նաև նույն տեղում, էջ 242։

41. Բավական մեծ գյուղ, ընկած է Կարինից հյուսիս։

42. Գյուղ, գտնվում է Կարինից արևմուտք, Սարչամ և Ղարա-սու գետերի խառնման մոտերքում։

43. Հմմտ. ՄԺ, 1, էջ 249։

44. Գյուղ և վանք, Կան գյուղի (ծանոթ. 41) մոտերքում։ Մատենադարանի № 6682 ձեռագիրը բովանդակում է Գրիգոր Օշականցու բանաստեղծությունները, նրա կենսագրությունը և այլ նյութեր։ Նա եղել է Էջմիածնի նվիրակ և XVIII դարի 90-ական թվերին շրջել է Կարինի, Բասենի, Թորթումի, Մուշի և այլ վայրերի վանքերը ու վերջիններիս նվիրված բանաստեղծություններ գրել։ Յուրաքանչյուր բանաստեղծության վերևում նշում է վանքի անունը, տեղը. օրինակ՝ ոտանավորներից մեկի վերևում գրված է. «Ի Մուտուրկու վանսըն, որ յանուն սրբոյ Լուսաւորչին կառուցեալ գոյ ի մէջ տաճարի նորին առաջի սուրբ սեղանոյն առ ոտս կամարին, որ իջանի յաջակողմն գրեցաւ այսպէս». մյուսը՝ «Ի դաշտն Կարնոյ որ ի հիւսիսակողմն քաղաքին ի վանս սրբոյ Խաչին ի մէջ սրբոյ տաճարին ի ճակատ սեանն, որ կանգնի ընդ որմն յաջակողմեան գրեցաւ այսպէս» և այլն։

45. Նաև գյուղ Կարինից հյուսիս-արևելք։ Հնձուց վանքը կոչվել է նաև Կարմիր վանք։

46. Հաջորդ էջում (573) հեղինակը նույն վանքի մասին գրում է. «որոց և հիշատակէ Մօսէս Խորենացի(ն)»։ Նշանակում է «պատմիչն ասէ» խոսքերով հեղինակը նկատի ունի Մ. Խորենացուն։ Սակայն վերջինիս պատմության այժմյան հրատարակության բնագրում այդ մասին ոչինչ չենք գտնում։ Հմմտ. Փ. Բուզանդ, IV, դ.։

47. Սարչամ լեռան ստորոտում, Կարինից հյուսիս։

48. Այս մասին տես նաև ՄԺ, 1, էջ 242։

49. Б և В տարբերակներում Հնձուց վանքին վերաբերող այս հատվածը դրված է Մուտուրկու վանքին վերաբերող հատվածից առաջ։

50. Իմա՛, Փեսուն, բերդաքաղաք Մարաշի կողմերում, Գեհեսնից հյուսիս։

51. Ն. Շնորհալին «Շարադրութիւն Հոմերական վիպասանութեամբ» աշխատության մեջ հենց այդպես էլ ասում է.

«Քաղաք Քեսոն իւր անուանեալ,
Ցոր հուպ է վանք Կարմիր կոչեալ»։ (Տես «Բանք չափաւ», Վենետիկ, 1830, էջ 549)։

52. Նախապես այդպես է գրել նաև Մ. Ուռհայեցին (էջ 300)։

53. Ն. Շնորհալին վերևում նշված երկում (ծանոթ. 51)։ Գող Վասիլին այդպես է կոչում. «Նախ ելուզակ մանկանուանեալ» (նույն տեղում, էջ 549)։

54. Շարունակությունը վերաբերում է Հերակլի Պարսկաստան արշավելու և խաչափայտի «ազատագրման» ավանդական պատմությանը, որը կրկնություն է ծանոթ նյութի, ուստի ավելորդ համարեցինք հրատարակել։ Բայց որովհետև այդ մասում կան ուշադրության արժանի տեղագրական նկարագրություններ, այդ պատճառով բերում ենք միայն առանձին հատվածներ։

55. Իմա Հովհ. Թլկուրանցի, Սսի կաթողիկոս 1485—1525 թթ.։ Մատենադարանի

№ 3119 ձեռագրում (էջ 229ա—246ա) պահվել է Հ. Թլկուրանցու Պրաբածոց մեկնությունը (չափածո), որից բերում ենք համապատասխան հատվածը.

«Եփրատ ի Կարնոյ ելանէ և Ցոսկեանց ի յերկու ական, շատ գետք մըտանեն ի նա, բաղում ջուրք յիրար միանան» (էջ 232բ)։

56. Վայր Ծաղկոտն գավառում։

57. Գետ, որը սկիզբ է առնում հարինի հյուսիսում գանվող Տումլի լեռից։ Այս գետը հայտնի է նաև Տումլի-սու անունով։

58. Հեղինակը մի փոքր սխալվում է, ոչ թե Հնդկաց, այլ Միջերկրական ծովն է միջնադարում կոչվել Սպիտակ ծով։ Տես նաև վերևում, էջ 517։ Իսկ ինչ վերաբերում է Արիստոտելի վկայակոչությանը, ապա, պետք է նշել, որ տիեզերական և այլ հարցերի մասին մանրամասն խոսվում է Արիստոտելին վերագրված «Յաղագս աշխարհի» աշխատության մեջ, որտեղ նման բան չենք գտնում, թեև նա նշում է, որ Օվկիանոսը մեզ է շրջապատում. «Իսկ բէլակօսն, այսինքն ծովախորն, որ է արտաքոյ տիեզերիս Ատլանտիկեան կոչի, և որ շրջահոսի զմեօք Ովկէանօս։ Իսկ ի նեղ ինչ բերանի բացելոյ առ մուտս արևու, ըստ Հերակլեան սասցելոց արձանացն կուսէ, զնոյն ներհոսէ ի ներքին ծովն, որպէս թէ ի լիճ ինչ, ըստ փոքուամ լայնացեալ ընդարձակի, պարփակելով ծոցս մեծամեծս շարամերձեալս իրերաց, երբեմն ըստ նեղուց պարանոցս անձկացեալ և երբեմն դարձեալ լայնացեալ» (Վ. Ա. Հակոբյան «Արիստոտելին վերագրված «Յաղագս աշխարհի» աշխատության հայկական թարգմանության ընդարձակ տեքստերը և այդ աշխատության հայկական մեկնությունները», Երևան, 1947, էջ 138, անտիպ)։

59. Իմա, Քոփրիքեյ։